

9(47-925)

Q-50

U. S. S. S. R.

Ленинградский государственный университет

ф. У. С. С. Р.

1857

1938

\$ 2004

Է. ՕՃԻՄԵԱՆ

140 1/4

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

78



Բ. ՇԱՐՔ

Ա. ԳԻՐՔ

Հ Ի Ն Դ Ա Ր Ե Ր

9(47.925)  
Ա. 50

1938

Յպարան ՍՍՀՍԿ-ՄՆՍՐՈՂ Գահիրե

25 Շարա ԹԵԼԵԻԲԻ

հայր քոյր

Լ. ՍՃԵՄԵԱՆ

9 (47. 925)

Ա-50

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բ. ՇԱՐՔ

Ա. ԳԻՐՔ

Հ Ի Ն Դ Ա Ր Ե Ր


1938

Տպարան ՍՍՀՍԿ-ՄԵՍՐՈՊ Գանիրե

25 Շարա ԹԷԼԵԻԲ

6485

Գրքեր



25698-Ա.Յ.



94874-56

### ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ներկայ հասցու կը կազմէ Հայոց Պատմութեան դասագիրքերու Բ. Շարքին առաջին գիրքը:

Որովհետեւ, ինչպէս նախապէս ալ բնութեամբ, դասագիրքերու բաժնուած են երկու «Է»/ի — Ա. Շարք եւ Բ. Շարք:

Ա. Շարքը կը պարունակէ, բացի Տարրականէ մը, (որ ազգային մեծ դեմքերու պատմութիւնն է սկիզբէն մինչեւ մեր օրերը), երկու գիրքեր՝ Հին Դարեր եւ Միջին ու Նոր Դարեր՝ պատմուած համառոտ կերպով եւ նիւթերը նկատի առնուած շրջան առ շրջան:

Բ. Շարքը, սակայն, կը բաղկանայ երեք գիրքերէ— Ներկայս՝ Ա. Գիրքը, որ միայն Հին Դարերն է, սկիզբէն մինչեւ Արեւակունեաց շրջանը, ահուտես աւելի բնորոշ ձեւով կերպով պատմուած էան Ա. Շարքին Ա. Գիրքը, յետոյ Բ. Շարքին Բ. Գիրքը կամ Միջին Դարերը եւ վերջապէս նոյն Շարքին Գ. Գիրքը, որ Նոր Դարերու եւ ժամանակակից շրջանի պատմութիւնն է, բնորոշակ, եւ բոլորովին նոր նիւթերով:

Սոյն դասագիրքերու մասին ցարդ քերթերու մէջ լոյս տեսած գրականականները՝ առհասարակ եւ ճիշտ գործողներու կողմէ, զանազան կողմերը ձեռննաս պատշաճ

նակիցներու անձնական նամակներով ինձի յայնչաճ գնահատութիւնները եւ վերջապէս գաղութահայ վարժարաններու մեծ մասին կողմէ դասագիրքերուս ընդունուիլը ապացոյց մըն են քէ օգտակար գործ մը տեսած եմ եւ ասիկա վարձատրութիւններուն մեծագոյնն է ինձնից ինձի համար:

Դասագիրքերուս Ա. Շարքը շուտով սպառեցաւ եւ երկրորդ սպագրութեան արժանացաւ: Այս առթիւ մասնաճեղատ կարգ մը մանր մուտք քերիները սրբագրութեան ենթարկուեցան: Սպառելու մօտ են, իրենց կարգին, Բ. Շարքին գիրքերը, որոնք եւս, նոր հրատարակութեան ասեն, բարեփոխութիւններու պիտի ենթարկուին:

Վստահ քէ ներկայ հասորը եւս պիտի զտնէ նոյն ընդունելութիւնը որուն արժանացան նախորդները, առիթը յարմար կը նկատեմ իմ խոր շնորհակալիքս յայնչեցելու պատշտակիցներուս եւ բարեկամներուս, ու խնդրելու որ բարի ըլլան, դարձեալ, դիտուած քերիները մասնացոյց ընել ինձի:

1938 Գահիրէ

Լ. ԱՃԷՄԵԱՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մասն Ա.

ՆԱԽԱՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դ Ա Ս Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Մեր ազգը միշտ Հայաստանի մէջ չէ բնակած ու մեր երկիրը միշտ Հայաստանն չէ կոչուած: Վերջին մէկ դարու ընթացքին մեր երկրին մէջ և մեր երկրին շուրջը գիտնականներու կտտարած պեղումները երեւան բերին որ մեզմէ առաջ Հայաստանի մէջ բնակած են ուրիշ ժողովուրդներ:


Այդ հին ժողովուրդներն են.

1. Սուբարիներ՝ Քրիստոսէ մօտ 3000 տարի առաջ,
  2. Խաբի-Միդանիներ՝ Ք.է առաջ 2000 թուականին,
  3. Մոսեր՝ Քրիստոսէ մօտ 1176 տարի առաջ,
  4. Ուրարտացիք՝ տիրած են մեր երկրին Քրիստոսէ առաջ 900 թուականին:
- Արմէններ կամ Հայեր՝ Քրիստոսէ 650 տարի առաջ է որ տիրեր են Հայաստանի:

Ի՞նչ ԳԻՏԵՆՔ ԱՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ.

Աեպագիր արձանագրութիւններու համաձայն, այս ժողովուրդները, բողոքատմամբ ու բիշներու, եղած են բաւական զարգացած: Անոնք կ'զբողէին երկրագործութեամբ, անասնապահութեամբ, արհեստներով, որսորդութեամբ և առեւտուրով: Հայաստանի մէջ գրտնուած հին ջրանցքներու մնացորդները ապացոյց են որ այս ժողովուրդները գիտէին շինել ջրանցքներ, ինչ որ շատ կարեւոր է երկրագործութեան համար: Գիտէին գործածել նաեւ մետաղներ, Միգանիներու թագաւորներէն Տուչրաթ իր աղջիկը նգիպտոսի Ամենոփիս Գ. փարաւունին կին տուաւ և իբր օժիտ միասին զըրկեց նոսեւ ոսկի և արծաթ՝ անշուշտ իբրեւ զարդեղէն:

Սուբարիներու երկիրը շատ ընդարձակ եղած է: Միգանիները երբ աիրեցին անոնց երկրին՝ շատ զօրաւոր թագաւորութիւն մը կազմեցին: Մոսքերը եղած են ահաւոր



Նեֆերիթի թագուհին

ժողովուրդ մը և կործանած են ամէն բան: Ասորեստանի թագաւոր-Փաղ-Ասար Ա. թագաւորը զանոնք անուանած է «ազգերու սարսափ»:

Արշաւոյ իւրաքանչիւր ժողովուրդը կործանելով իրմէ առաջ գոյութիւն ունեցող թագաւորութիւնը, բնակչութիւնը ձուլեց իր մէջ, կամ ինք խառնուեցաւ անոնց հետ: Այսպէս շարունակուեցաւ մինչեւ Հայոց գալը: Ասո՛ր համար է որ մեր ազգը զուտ չէ, այլ խառնուրդը շատ մը ժողովուրդներու: Այդ հին ցեղերու շատ մը ըմբռնումները, սովորութիւնները, այս կերպով, ապրեցան մեր մէջ: Անոնց երկիրներու քաղաքներուն անուններէն ոմանք եւս չմոռցուեցան:

Այս ժողովուրդներուն պատմութեան մասին դեռ շատ բան չենք գիտեր: Անոնցմէ ամենէն կարեւորը եղած են Սալտ-Ուրարտացիները որոնք ժամանակով աւելի մօտիկ են մեզի: Ուստի խօսինք անոնց մասին:


ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հայաստան միշտ Հայերո՞վ բնակուած է: Մեզմէ առաջ ո՞ր ժողովուրդները ապրած են հոն: Ի՞նչ զիտներ այս ժողովուրդներու մասին, ինչո՞վ կ'զբողէին անոնք: Ի՞նչ ըրած է արշաւոյ իւրաքանչիւր ժողովուրդը: Այս ժողովուրդներէն ո՞րը եղած է աւելի կարեւոր և ժամանակով մեզի աւելի մօտ:



Ուրարտացի ազնուականներու խումբ մը

**Գ Ա Ս Բ .**

**ԽԱՂԴ-ՈՒՐԱՐՏԱՑԻՔ**



**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ.**— Ասորեստանեան արձանագրութիւնները մեր երկիրը նախ կոչած են Նաիրի, որ կը նշանակէ գետերու մէջ տեղ, ապա Ուրարտու՝ որմէ առաջ եկած է Արարատ անունը՝ յիշուած Ս. Գիրքի մէջ եւս: Այդ արձանագրութեանց համեմատ սոյն երկրին ժողովուրդներն ալ նախ կոչուած են Նաիրեցի ապա Ուրարացի: Բայց այդ երկրին թագաւորները իրենց ժողովուրդը կոչած են Խաղդի, իսկ երկիրը՝ Խաղդիս իրենց մեծ աստուծոյ Խաղտիսի անունով, ինչպէս Ասորեստանցիք իրենց անունը առած են Ասուր աստուծոյ անունէն:

Նաիրեցոց կամ Խաղդ-Ուրարացոց երկիրը մէկ թագաւորութիւն չէր կազմեր. այլ բաժնուած էր եօթը մասերու, որոնք յետոյ կազմեցին դաշնակցային պետութիւն մը:

Այդ եօթը մասերն էին.

1. Ուրարտուի (Արարատ) թագաւորութիւնը.
2. Բիայնա (Վան) նոյն լիճին արեւելեան երկիրները.
3. Միճնի Վանայ և Ուրմիոյ լիճերուն մէջտեղ.
4. Մուսասիւր (Մուշ) Վանայ լիճին արեւմուտքը.
5. Միլսիս՝ Բարձր Հայք.
6. Նաիրի՝ Վանայ լիճին հարաւակողմը.
7. Մելիդ՝ Եփրատի վերին հոսանքի վրայ. Մելիդին է կամ այժմու Մալաթիան:

Այս թագաւորութիւններէն իւրաքանչիւրն ալ բաժնուած էր բազմաթիւ անկախ ցեղերու:

Այս թագաւորութիւններէն Մուսասիւր և Միլսիս աւելի սերտ կերպով կապուած էին Ուրարտուի հետ որուն թագաւորներուն առաջնորդութեամբ մեծ պատերազմներ մղեցին հզօր Ասորեստանի դէմ՝ Հայաստանի հարաւային մասերու տիրապետութեան համար:

**ՓՈՂՈՎՈՒՐԴԸ** ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ . — Խաղդ-Ուրարացի ժողովուրդը կը բաժնուէր երեք դասակարգերու.

Քուրմեր

Ազնուականներ և

Բուն ժողովուրդը:

Քուրմեր հարուստ, միւսներէն քիչ մ'աւելի զարգացած և ճարպիկ էին. իրենց պաշտօնը ժառանգական էր: Անոնք, միեւնոյն ատեն կ'ըլլային դատաւորներ, բժիշկներ և գիտնականներ:

Ազնուականները հարուստ և ազգեցիկ էին և իրենց կը պատկանէր հողը: Իրենք կը կազմէին կառավարութիւնը և իրենք կը մղէին պատերազմները:

Փողովուրդը աղատ մարդերու մեծ զանգուածն էր: Մեծամասնութիւնը աղքատ էր և հողը կը մշակէր ազնուականներուն համար: Կը բնակէր դաշտերու մէջ և ազնուականներու հետ կ'երթար պատերազմի:

Ուրարացիք կ'զբաղէին երկրագործութեամբ, անասնապահութեամբ և արհեստներով, որոնք համեմատաբար շատ զարգացած էին:

Ուրարացիք ունէին կազմակերպուած պետութիւն, զօրք, արքունիք: Երկրի բացարձակ տէրն էր թագաւորը որ իր շուրջը ունէր ռազմիկները:





Ուրարտացիք մեծ ուշադրութիւն կը դարձնէին երկրին պաշտպանութեան միջոցներուն վրայ: Կը շինէին բերդեր և ամրոցներ: Բանակը կը բաղկանար հետեւակ և հեծեալ զինուորներէ: Զօրքը զինուած էր սուրով, նիզակով և եռանկիւն նետերով: Կը գործածէին մետաղեայ վահաններ: Ունէին ազգակառքեր, որմէ կը զրկէին մինչեւ եգիպտոս:

ԿՐՕՆՒՅ ԵՒ ԳԻՐ.— Խալտ-Ուրարտացիք ունէին իրենց զարգացման համապատասխան կրօնք մը, որ լոյսի գաղափարին վրայ հաստատուած էր: Շատ էր անոնց աստուածներուն թիւը: Վանի արձանագրութիւններէն մէկուն մէջ 56 աստուածներու անուն յիշատակուած է:

Գլխաւոր աստուածներն էին.

Խալդիս՝ լոյսի աստուածը, որ մաքրութիւն կուտար և կը կոչուէր նաեւ «Հօր Տէր», «Տէր Ժողովուրդներու»:

- Տէխաբաս՝ երկնքի աստուածը:
- Արսինիս՝ արեգակ աստուածը:
- Սիէլսարդիս՝ լուսին աստուածը:
- Բագրասու՝ որ Խալդիսի հարսն էր, եւնս:



Ուրարտեան դիցուհի մը

Խալդերը ունէին տաճարներ ուր կը գտնուէին իրենց աստուածներուն և աստուածուհիներուն արձանները, որոնք մարդու և կենդանիներու կը նմանէին:




Հարաւ-արեւելեան հովր

Խալդ-Ուրարտացիները ունէին իրենց գիրն ու գրականութիւնը: Գտնուած են մօտ 200 սեպածեւ արձանագրութիւններ՝ որոնց ընթերցումը մեծ լոյս կը սփռէ մեր անցեալին վրայ:

Նաիր-Ուրարտու թէեւ բաժնուած հօթը թագաւո-

բուժիչներու, սակայն մէ'կ էր անոր ժողովուրդը և ամէնքը նո'յն կրօնքն ու նո'յն լեզուն ունէին :




Սեպագիր արձանագրութիւն մը

Ուրարտական սեպագրութիւնները ասորեստան-  
եաններուն կը նմանին թէև ձևով, բայց իմաստով  
տարբեր են: Սարաուր Ա. է որ առաջին անգամ այս  
ձևով գիրը մտցուցած է իր երկիրը և իր գործերը  
արձանագրած է Ասորեստանի թագաւորներուն գոռոզ  
ոճովը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ասորեստանեան արձանագրութիւնները ի՞նչ  
կոչւած են նախ մեր երկիրը. յետոյ ի՞նչ կոչւած են: Ինչո՞ւ խալ-  
դի եւս կոչւած են: Քանի՞ մասերու կը բաժնուէր ան, որո՞նք է-  
ին: Ի՞նչ դասակարգի կային խալդացոց մէջ. իւրաքանչիւրի  
մասին ի՞նչ գիտէք: Ի՞նչ գիտէք անոնց կրօնքին եւ գիրին մա-  
սին:

Գ Ա Ս Գ.

ՆԱԻՐ-ՈՒՐԱՐՏԱՑԻՈՑ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ ԵՒ ՆԱԻՐԻՑԻՆԵՐՈՒ ԿԸ-  
ՌԻՒՆԵՐԸ.— Ինչպէս ըսինք, մեր երկիրը նախապէս  
կը կոչուէր Նաիրի, որ կը տարածուէր Եփրատէն մին-  
չեւ Ուրմիոյ լիճը:

Ասորեստանի Ասուր-ու-Բալիա հօր թագաւորը,  
առաջին անգամ 1410ին,  
մտաւ Նաիրի և անոր եր-  
կիրներէն մաս մը հարկա-  
տու ըրաւ:

Թագաւոր-Փաղ-Ասար Ա.  
աւելի մեծ թագաւորը ե-  
րեք անգամ արշաւանք կա-  
տարեց. իրեն դէմ ելան  
Նաիրիի քսաներեք թագա-  
ւորները, որոնց թիւը յե-  
տոյ հասաւ վաթսունի, սա-  
կայն պարտուեցան և շա-  
տերը զերի ինկան:

Անկէ յետոյ, սակայն,  
Ասորեստան ատեն մը տկա-  
րացաւ և Նաիրի երկու հա-  
րիւր տարիի չափ հանգիստ ապրեցաւ:



Թագաւոր-Փաղ-Ասար Ա.

Ասուր-Նազիր-Աքալ անուանի թագաւորը, իր կայսրութիւնը վերակազմելէ յետոյ, չորս անգամ արշաւեց Նաիրիի վրայ և մեծ անգթութիւններ գործեց:

**ԱՐԱՄԷ ԵՒ ԱՐԱՄԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ.** — Այս ատեններ, սակայն, մէջտեղ ելաւ հզօր իշխան մը՝ Ուրարտուի թագաւորը Արամէ, որ կամաց կամաց իր երկրին սահմանները ընդարձակեց, տկարացուց Նաիրին, գրաւեց նաեւ Բիւսնան և անոր Տոսպ (հիմա Վան) քաղաքը ըրաւ իրեն մայրաքաղաք:

Արամէ հիմնադիրը եղաւ նոր հարստութեան մը՝ Արամեան հարստութեան, որ տեւեց մինչեւ 580 թուականը Քսէ առաջ, այսինքն մօտ 280 տարի: Այս շրջանը կրնանք բամբել երկու մասի — հօգուրեան եւ փառքի օրջան և սկարացման ու անկման օրջան, որ վերջացաւ Արամէներու կամ Հայերու արշաւանքովը:

Արամէ իրեն դաշնակից ընելով միւս թագաւորները ազգային միութիւն մը առաջ բերաւ և մեծամեծ կռիւներու դուռ բացաւ:

Սաղմոն-Ասար Բ. թագաւորը երեք անգամ իր վրայ արշաւեց, ու թէեւ շատ անգթութիւններ գործեց, բայց չկրցաւ տկարացնել զայն և Ուրարտացուց միութիւնը խորտակել:

**ԱՐԱՄԷՒ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ. ՄԵՆՈՒԱՍ.** — Արամէի յաջորդներն եղան Լուսիպրիս, Սարգուր Ա. և Իսպուրիցիս, որոնց ատենը եւս պատերազմները շարունակուեցան և Ուրարտացիք միշտ ինքզինքնին հերոսաբար պաշտպանեցին: Մենուաս, սակայն, զօրաւոր թագաւոր մը եղաւ և իր իշխանութիւնը ընդարձակեց: Իր

կայսրութեան սահմանները կը տարածուէին Երասխէն մինչեւ Տիգրիս և մինչեւ Մելիդիկնէ:

**ԱՐԳԻՍՏԻՍ Ա.** — Աւելի անուանի եղաւ Մենուասի որդին Արգիստիսը, որ նախ տանեւչորս արշաւանքներ գործեց ներքին ապստամբութիւնները ճնշելու համար: Իր իշխանութեան սահմանները տարածեց մինչեւ Կովկաս, մինչեւ Կասպից ծով և Պարսկաստան, հարաւէն մինչեւ Մծբին ու Նինուէ, իսկ արեւմուտքէն մինչեւ Կապադովկիա: Եղաւ շինարար թագաւոր մը: 215,000 մարդ գերի բերաւ և բնակեցուց Վան մայրաքաղաքը, նաեւ կէս միլիոն եզներ ու ոչխար: Իր գործերը արձանագրած է Վանայ բերդին մէկ երեսին վրայ:

**Սարգուր Բ.** ևւս ստիպուեցաւ նախ կռուիլ ապստամբներուն դէմ և հպատակեցնել զանոնք: Արեւելեան երկիրները իրեն հնազանդեցնելէ յետոյ, դիմեց դէպի արեւմուտք, հասաւ մինչեւ Մելիդիկնէ որուն թագաւորը գերի բերաւ 70,000է աւելի կալանաւորներու հետ: Բերաւ նաեւ անթիւ աւար: Յետոյ մտաւ Ասորիք ուր իրրեւ ազատարար ընդունուեցաւ: Բայց իր դէմ եկաւ Թագաթ-Փող-Ասար Բ. որմէ չարաչար պարտուեցաւ: Սակայն Սարգուր Բ. չյուսահատեցաւ, իրեն միացուց Միջագետքի և Փոքր Ասիոյ շատ մը թագաւորները ու նոր կռիւի մը սկսաւ, բայց նորէն պարտուեցաւ: Այս կռիւին մէջ, դաշնակիցներէն ինկան 73,000 անձ: Սարգուր հազիւ կարողացաւ փախչիլ:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Ի՞նչ ըրին Ասուր-ու-Բալիտ, Թագաթ-Փող-Ասար եւ Ասուր-Նազիր-Աքալ արքաները: Ի՞նչ կ'ապացուցանեն այս բազմաթիւ արշաւանքները: Ո՞վ էր Արամէ եւ ի՞նչ ըրաւ: Ի՞նչ գիտէք Մենուասի մասին, ի՞նչ գործեր տեսան Արգիստիս Ա. եւ Սարգուր Բ.:

ԴԱՍ Դ.

ՌՈՒՍԱՍ Ա. ԵՒ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՆԿՈՒՄԸ



ՌՈՒՍԱՍ Ա. ԵՒ ԻՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ. — Սարգուր

Բ. Ի պարտութիւնովը Ուրարտուի բոլոր հարաւային գաւառները անցան Ասորեստանի Սակայն Ռուսաս Ա. երկրին ներքին ապստամբութիւնները ճնշելէ յետոյ, իր շուրջ հաւաքեց շրջակայ թագաւորները՝ ազգակից կամ օտար, ու նորէն ձեռնարկեց կռիւի։ Այն ատեն Ասորեստանի թագաւորն էր նշանաւորն Սարգոն, որ իր կողմը շահեցաւ Միննի թա-



Սարգոն

գաւորը՝ Ազա։ Ռուսաս Ա. Մուսասիրի թագաւոր Բակատասի ձեռքով սպանել տուաւ Ազան, որուն յաջորդը՝ Ուլուսան՝ միացաւ Ռուսասի։ Սարգոն կործանեց նախ Հիթիթներու թագաւորութիւնը ու տիրելէ յետոյ Ուլուսանի երկրին, բռնեց Բակատաս թագաւորը և սպաննեց զայն։ Ուլուսան անձնատուր եղաւ Սարգոն յետոյ քաղեց դաշնակիցներուն վրայ որոնք չարաչար պարտուեցան։ Սարգոն մտաւ Մուսասիր (Մուշ) որուն Ուրգանա թագաւորը Ռուսասի հաւատարիմ դաշնակիցն էր։ Մուսասիր, որ Նաիր-Ուրարտուի սրբազան քաղաքն էր, թըշնամիրն ձեռքը ինկաւ։



Ուրգանայի Ուրգանա թագաւորին կնիք հարաւ, որդիները և աղջիկները 20,000է աւելի գերիներու հետ Նինուէ տարուեցան։ Երկիրը կողոպտուեցաւ, կարասի, կենդանիներ, ոսկի, արծաթ, թանկագին քարեր, փղոսկրէ գաւազաններ, թագաւորին կնիքը և նշանները, աստուածներու արձաններ և մանաւանդ Խալդի աստուծոյ արձանը գրաւուեցան։ Այս դժբախտութեանց լուրերը երբ Ռուսաս իմացաւ լեռներու մէջ, ուր փախած էր, շատ տխրեցաւ. իր քով հրաւիրեց բոլոր մեծամեծները և անոնց բացատրել յետոյ աղէտին մեծութիւնը, իր դաշոյնովը ինքզինքն ապրտեց։

24874-57



**ԱՐԳԻՍՏԻՍ Բ. ԵՒ ՌՈՒՍՍՍ Բ.**— Այս մեծ աւել-  
րումէն յետոյ Ուրարտուն չկործանեցաւ սակայնս Ար-  
գիստիս Բ. լաւ յարաբերութիւն պահեց Ասորեստանց-  
ւոց հետ և ինքզինքը տուաւ շինարարութեան, մանա-  
ւանդ որ Կիմմերները և Սկիւթացիները սկսած էին  
հիւսիսէն նեղել զինքը:


Իր յաջորդը Ռուսաս Բ. հրաժարեցաւ աշխարհա-  
կալութիւններէ: Ասոր ատենն է, որ Ազրամելէք և  
Սանասարը իրենց հայրը սպաննելով փախան Ուրար-  
տու:

**ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆ ԵՒ ԿԻՄՄԵՐ-ՍԿԻՒԹԱՅԻՈՑ ԱՐ-  
ՇԱՒԱՆՔԸ.**— 675—600 Ուրարտուի անկման շրջանն  
է: Այս շրջանի թագաւորները ամփոփուեցան իրենց  
կալուածներուն մէջ և նուէրներով բարեկամութիւն  
պահեցին Ասորեստանի հետ:

Այս շրջանին հիւսիսէն նոր փոթորիկ մը փրթաւ:  
Կիմմերներ և Սկիւթացիներն էին անոնք որ անցնելով  
Կովկասեան լեռներէն մտան Ուրարտու, ուր հաստատ-  
ւեցաւ իրենցմէ մաս մը, իսկ մեծ բազմութիւն մըն ալ  
անցաւ դէպի Ասորեստան, որուն թագաւորը՝ Ասուր-  
Բանի-Բալ՝ հազիւ կարողացաւ փրկել իր մայրաքաղա-  
քը: Ասորեստանը շատ տկարացաւ և քիչ յետոյ կոր-  
ծանեցաւ Մարաց Կիւքսար և Բարբելոնի Նաբուպալա-  
սար թագաւորներուն կողմէ: Ասորեստանի վերջին  
թագաւորը՝ Մարակոս, թշնամիին ձեռքը չիյնալու  
համար, իր պալատին մէջ, իր ընտանիքին հետ ինք-  
զինքը այրեց: Այս ատեն Ուրարտուի թագաւորն էր  
Իրքիսս և այս ժամանակներուն է որ Հայաստան կը  
մտնեն Արմէնները:

**ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.**— Ի՞նչ հետեւանք ունեցաւ Մարդուր Բ.ի  
պարտութիւնը: Ի՞նչ ըրաւ Ռուսաս Ա.: Ի՞նչ ըրաւ Ասորեստանի  
Մարգոն թագաւորը: Ի՞նչ զէպրեր տեղի ունեցան Ուրարտուի  
մէջ: Ի՞նչպէս վերջացաւ պատերազմը: Ի՞նչ ըրաւ Ռուսաս Ա.:

Ի՞նչ ընթացք բռնեցին Արգիստիս Բ. և Ռուսաս Բ. թագա-  
ւորները: Այս մեծ պատերազմներէն յետոյ ի՞նչ եղան Ուրարտա-  
ցիք և Ասորեստանցիք: Ի՞նչ ըրին Կիմմեր-Սկիւթացիները: Ի՞նչ-  
պէս վերջացաւ Ասորեստանի կայսրութիւնը:




Ասուր-Բանի-Բալ և իր կիներ

Մասն Բ.

# ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆ


ԴԱՍ Ե.

## ՀԱՅ ԱԶԳԻՆ ԾԱԳՈՒՄԸ



ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԱՐՇԱՒԱՆՔԸ.— Հայ ազգային աւանդութեան համաձայն մեր նախնիքը եկած են Հայաստանի հարուստին կողմէն, Հայկ նահապետին առաջնորդութեամբ, ջրհեղեղէն յետոյ Սակայն այսօր գիտնականներէն շատերը այն կարծիքէն են թէ անոնք հնդեւրոպական ժողովուրդ մըն են, ազգակից Յոյներուն, Լատիններուն, Գերմաններուն, Պարսիկներուն և Հնդկներուն: Այդ գիտնականները կը հաստատեն թէ Հայերը կամ Արմէնները նախապէս կը բնակէին Թրակիա և Քրիստոսէ մօտ 1300 տարի առաջ հալածուելով դրացիներէն, ուրիշ ժողովուրդներու հետ, Վոսփորի վրայով անցան Փոքր Ասիա և հաստատուեցան Փոխգիւս: Իններորդ դարուն անոնք առաջացան գէպի Ալիա գետի արեւելակողմը և բնակեցան Կապադովկիա, ուր եւս նեղուելով շրջակայ ժողովուրդներէն, գաղթեցին Գայլ գետի վարի կողմերը և հիմնեցին հայկական առաջին պետութիւնը: Այդ երկրամասը, յետոյ, կոչուեցաւ Փոքր Հայք: Հոս երկար ատեն մնալէ, զօ-

րանալէ և կազմակերպուելէ յետոյ, Մալաթիոյ կողմերէն Եփրատի ուղղութեամբ քալելով մտան Այրարատ ու վերջին հարուած մը տալով անոր թագաւորութեան, զայն կործանեցին և տիրեցին երկրին:



Հայաստան եւ հարեւան երկրները

Պարտուած Խալդիներէն մտաւ մը փախաւ հիւսիսային կողմը ու հոն հաստատուեցաւ և իրենց անու-

նովը այդ երկիրը կոչուեցաւ Խալդեաց երկիր, իսկ մնացողները հպատակեցան նորեկներուն և ձուլուեցան անոնց մէջ:

Հայոց գաղթը Հայաստան տեղի ունեցած է Քրիստոսէ մօտ 650 տարի առաջ

Օտարները մեզ կ'անուանեն Արմեն և մեր երկիրը Արմենիա, իսկ մենք զմեզ կը կոչենք Հայ և մեր հայրենիքը՝ Հայաստան: Գիտնականներէ ոմանց կարծիքին համեմատ Հայ կը նշանակէ պիս, հայր (Pater), որովհետև նորեկները ինքզինքնին անուանեցին պիս Հայաստանի այդ բնիկներուն:

Հիներու վկայութեան համաձայն Հայ մարդը եղած է յաղթանդամ և համաչափ անդամներով, թխագոյն, աչքերը մեծարաց, սեւ և փայլուն, շրթունքը և քիթը՝ նուրբ: Ան եղած է ուշիմ, աշխատասէր և ազա-



Հայկական թիպար մը



Հայ թագուհի մը

տութեան սիրահար: Իր այս յատկութիւններովը ան իր շրջապատի ազգերէն միշտ բարձր եղած է և եւրոպացիներէն վար չի մնար:


Հաստատուելէ յետոյ իրենց այս նոր հայրենիքին մէջ, Հայերը միաձոյլ ազգ մը չկազմեցին: Հայաստանի բարձր լեռներն ու խոր ձորերը հազարակցութիւնները շատ կը գոռարացնէին ու կը դիւրացնէին անջատ անջատ իշխանութիւններու կազմութիւնը: Այսպէս, Հայաստան, հին շրջաններէն սկսեալ ունեցաւ շատ մը նախարարութիւններ որոնցմէ Մանուազեանները՝ Մենուատի, Ռշտունիները՝ Ռուսասի, Բագրատունիները՝ Բագատասի անունները կը յիշեցնեն:

Սակայն այդ հին շրջանին իսկ Հայերը ունեցան իրենց թագաւորները որոնց ո՛չ անունները յայտնի են մեզի և ոչ ալ գործերը: Ծանօթ է միայն Տիգրան Ա. ի անունը, որուն հայրը երբ չուզեց տուրք տալ Մարաց Կիաքսար Բ. թագաւորին, այս վերջինը բանակով Հայաստան զրկեց իր քրոջ որդին Կիւրոսը, որ Տիգրանի հետ մանկութեան ընկեր էր, և Տիգրանի միջնորդութեամբ հաշտութիւն կայացաւ: Կիւրոս Հայաստանը դաշնակից դարձնելէ յետոյ Կիաքսարին, ստացաւ մօտ քառորդ միլիոն ֆր. արծաթ, 4000 հեծեալ և 20,000 հետեւակ զօրք, որոնց վրայ հրամանատար կարգեց Տիգրանը և հետագաւ Հայաստանէն ուրիշ կողմ պատերազմի երթալու համար:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Գիտնականները, այսօր, ի՞նչպէս կը բացարեն Հայոց ծագումը: Ո՞ր տեղերը կանգ առին Հայերը իրենց գաղթի ժամանակ եւ ե՞րբ մտան Հայաստան: Ի՞նչ եղան Խալդիները: Ի՞նչ զիտներ հայ տիպարի մասին: Հայերը, իրենց նոր հայրենիքին մէջ, ինչո՞ւ միաձոյլ ազգ մը չկազմեցին: Ի՞նչ զիտներ Հայոց հին թագաւորութեան մասին:

### Դ Ա Ս Զ.

## ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՐՍԻՑ ԵՒ ՍԵԼԵՒԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ



### ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՐՍԻՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ. —

Վեցերորդ դարու վերջերը, Քսէ առաջ, Պարսկաստան զօրանալով տիրեց ոչ միայն Մարաստանի այլ և Հայաստանի և շրջակայ երկիրներուն: Պարսկական տիրապետութիւնը մեր երկրին վրայ տեւեց մօտ երկու դար, մինչեւ Աղեքսանդր Մակեդոնացիի արշաւանքը 330 թուականը:

Այս երկու դարու ընթացքին Պարսկաստան մեծ ազդեցութիւն ձգեց իր տիրապետած երկիրներուն և անոնց կարգին՝ նաեւ Հայաստանի վրայ և հայ թագաւորները ճանչցան Պարսից գերիշխանութիւնը:

Բայց պարսիկ թագաւորները չէին խառնուեր մեր երկրի ներքին գործերուն ու կը բաւականանային միայն սուրբ ստանալով: Սակայն երբ Պարսկաստանի թագաւոր եղաւ Դարեհ Ա. Վշտասպեան, կացութիւնը փոխուեցաւ, որովհետեւ ան աշխատեցաւ ոչնչացնել Հայոց ներքին անկախութիւնը և մեր երկիրը վերածեց սատրապութեան, այսինքն զայն ըրաւ Պարսկաստանի մէկ նահանգը: Ան այսպէս վարուեցաւ նաեւ միւս երկիրներուն հետ, որոնք ապստամբեցան իրմէ, և Դարեհ երկար կռիւներ մղելով անոնց դէմ հպատակեցուց իրեն: Դարեհ իր այս գործերուն պատմութիւ-

նը երեք լեզուներով արձանագրած է Բիհիստունի ժայռին վրայ: Հայերն այլ այս պատճառաւ, ապստամբած էին և Դարեհ երկու անգամ բանակ ղրկեց անոնց վրայ և շատ դժուարին կռիւներէ յետոյ միայն կարողացաւ հընազանդեցնել մեր երկիրը 519ին: Բիհիստունի այս արձանագրութեան մէջ է որ, առաջին անգամ ըլլալով, Դարեհ մեր երկիրը կ'անուանէ Արմէնիա:



Դարեհ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ՍԱՏՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ. —

Վերջացնելէ յետոյ ապստամբութիւնները, Դարեհ իր երկիրը բաժնեց 23 սատրապութիւններու և անոնց վրայ նշանակեց սատրապներ, այսինքն կառավարիչներ: Ըստ յոյն պատմիչ Հերոդոտոսի Հայաստանը բաժնուած էր երկու սատրապութեանց՝ 13րդ և 1ժրդ: Առաջին սատրապութիւնը կը տարածուէր Հայաստանի հարաւ-արեւմտեան կողմը, մինչեւ Վանայ լիճը, իսկ երկրորդը՝ հիւսիս-արեւելեան կողմը, Ատրպատականէն մինչեւ Պոնտոս:

Այս սատրապութեանց սահմաններուն մէջ միայն Հայեր չէին ապրեր այլ և ուրիշ ժողովուրդներ որ ըսել է թէ Հայաստանի հին բնակիչները տակաւին ամբողջապէս չէին ձուլուած Հայոց մէջ:



**ՔՍԵՆՈՓՈՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** — Քսէ 400 տարի առաջ մեր երկրէն անցաւ Քսենոփոն յոյն պատմիչը և իր տեսածները գրի առաւ: Քսենոփոն մեր երկիրը կ'անուանէ «ընդարձակ և բարեկեցիկ» և նորէն բաժնուած երկու սատրապութիւններու, արեւմտեան և արեւելեան: Առաջինի սատրապն էր Որոնիտոս իսկ երկրորդին՝ Տիրիբաս:

Քսենոփոն իր 10,000 զօրքերովը հարաւէն գալով կ'անցնի Բաղէշի և Մուշի վրայով դէպի հիւսիս, ծովով Յունաստան վերադառնալու համար: Ան Հայաստանի մէջ չէ հանդիպած քաղաքներու, այլ հարուստ գիւղերու, ուր գտած է ամէն տեսակ պաշարեղէն: Արածանիի եզերքը, Յոյները տեսեր են աղբիւրներէն ջուր տանող կիներ որոնք պարսկերէն խօսած են իրենց հետ: Կը նկարագրէ Հայոց տուները որոնք գետնափոր են եղած և բարեկեցիկ: Ուրեմն Հայերը եղեր են նրատակեաց և երկրագործ ժողովուրդ, նաեւ հիւրասէր:

Արհեստները քիչ շատ զարգացած են եղեր Հայոց մէջ, որոնք կ'զբաղէին նաեւ առեւտուրով: Եփրատ և Տիգրիս գետերու միջոցաւ, լաստերով, անոնք հացահատիկ, ձէթ, աղ, գինի, պղինձ, գէնքեր, ձի և ջորի կը ղրկէին հարաւի երկիրները և այդ կողմերէն կը բերէին համեմներ և թանկագին հիւսուածեղէններ:

Դարեհի շինած արքայական ճամբան, որ կ'երկարէր Ծօշէն մինչեւ Միջերկրական և կ'անցնէր Հայաստանի քովէն, առեւտրական յարաբերութեանց մեծ գիւրութիւն կուտար:

Հայաստան Պարսից թագաւորին իբր տուրք կը վճարէր մօտ 50,000 ոսկի դրամ և 20,000 ձի: Երկրի իշխանութեան գլուխն էր Սատրապը որ մահու և կենաց իշխանութիւն ունէր: Ան թագաւորի մը պէս

կ'ապրէր: Իր պաշտօնն էր երկիրը խողող պահել, անոր յառաջդիմութեան աշխատիլ և տուրքերը հաւաքելով թագաւորին ղրկել:

**ՀԱՅՍՍՏԱՆ ՍԵԼԵՒԿԵԱՆ ԻՇԽՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ.**— 331—330 թուականին Աղեքսանդր Մակեդոնացին Արքելայի ճակատամարտին մէջ խորտակելով Պարսից ուժը տիրացաւ Ասիոյ մեծ մասին: Աղեքսանդր իր իշխանութիւնը տարածեց մինչեւ Հնդկաստան և Յունաստանէն մինչեւ Գանգէս իր իշխանութիւնը ճանչըցաւ: Պարսկական իշխանութիւնը կործանեցաւ և Հայաստան եւս ինկաւ Աղեքսանդրի իշխանութեան տակ: Բայց Աղեքսանդր չուտ մտաւ (323ին) և իր զօրավարներու միջեւ կռիւներ ծագեցան զահի չուրջ: Երբ այս կռիւները վերջացան, Աղեքսանդրի կայսրութիւնը բաժնուեցաւ 3 կարեւոր թագաւորութիւններու—Մակեդոնիա՝ որուն մէջ էր նաեւ Յունաստանը, Եգիպտոս՝ որ ինկաւ Պաղոմէոս զօրավարին, և Փոքր Ասիա, Պարսկաստանի հետ բաժին ինկաւ Սելեւկոս զօրավարին որուն հիմնած թագաւորութիւնն ալ կոչուեցաւ Սելեւկեան: Հայաստան մտաւ Սելեւկեան իշխանութեան տակ:

**ՀԵՏԵՒԱՆՔԸ.**— Յոյները, անկէ յետոյ, արեւելքի մէջ բազմաթիւ քաղաքներ հիմնեցին որոնք լեցուեցան յոյն բնակչութեամբ: Առեւտրական շարժումը ծաղկեցաւ և այս նոր գաղթականներու միջոցաւ յունական կրթութիւնը, գիրն ու գրականութիւնը, տարածուեցաւ արեւելքի մէջ: Հայերն ալ մեծապէս ազդուեցան այս նոր քաղաքակրթութենէն: Այս նոր շրջանին է որ հայ ժողովուրդը վերջնականապէս կը

կազմուի և 190 թուականին, Մագնէզիայի ճակատա-  
մարտէն յետոյ, իր երկու սատրապութիւնները թագա-  
ւորութեան կը վերածուին, մին՝ Չարեհի և միւսը՝  
Արտաշէսի գլխաւորութեամբ: Արտաշէսի հիմնած պե-  
տութեան մէջ գտնուող ցեղերը խառնուելով կազմե-  
ցին Հայ Ազգը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — 2. դարու վերջերը ի՞նչ փոփոխութիւն տեղի  
ունեցաւ: Պարսիկները ի՞նչպէս կը վարուէին Հայոց հետ: Ի՞նչ  
ըրաւ Դարեհ Ա. և ի՞նչ եղաւ հետեւանքը: Ի՞նչ զիտներ Հայաս-  
տանի սատրապութեանց մասին: Ի՞նչ տեղեկութիւններ կուտայ  
Քսենոփոն այս շրջանի Հայաստանի մասին: Ե՞րբ եւ ի՞նչպէս  
Հայաստան ինկաւ Սելեւկեան տիրապետութեան տակ: Սելեւկե-  
անց տիրապետութիւնը ի՞նչ հետեւանք ունեցաւ Հայաստանի  
համար: Ե՞րբ վերջացաւ այդ տիրապետութիւնը:



## ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ (190 Ն.Ք.Ք. 14 Յ.Ք.)

**Դ Ա Ս Է.**

**ԱՐՏԱՇԷՍ Ա.**



ԱՅՍ ՇՐՋԱՆԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.— Արտաշէս-  
եան հարստութիւնով կ'սկսի մեր ազգին համար ճշմա-  
րիւ ազգային պատմութիւն մը: Այս հարստութենէն  
ունեցած ենք 11 հայ թագաւորներ, որոնցմէ երեքը  
սակայն՝ քուստիկ կարեւորութիւն մը ունեցան. սաոնք  
են՝ Արտաշէս Ա., Տիգրան Գ. և Արտաշէս Բ.: Բայց  
Արտաշէսեան բոլոր թագաւորներն ալ աշխատեցան  
Հայ ազգը և Հայաստան աշխարհը միացնել և զօրա-  
ցընել:

Հիմա տեսնենք թէ ի՞նչպէս եղաւ որ Արտաշէս  
կարողացաւ հիմնել Արտաշէսեան հարստութիւնը:

ԱՐՏԱՇԷՍ Ա. 190 — 161.— Սելեւկեան թագաւոր-  
ներէն Անտիոքոս Գ. զօրանալով գրաւեց շատ մը եր-  
կիրներ: Պարսկաստան որ Քսէ 250 տարի առաջ իր  
թագաւորութիւնը ունեցեր էր (Պարթեւ Արշակունի-  
ներու) պարտուեցաւ Անտիոքոսէն և Հայաստան ինկաւ  
Սելեւկեան տիրապետութեան տակ: Անտիոքոս երկու  
սատրապներ նշանակեց Հայաստանի վրայ, արեւմտեան  
մասին համար Չարեհ, իսկ արեւելեանին համար՝ Ար-

տաշէս : Ասոնք երկուքն ալ իր զօրավարներն էին և յունական կրթութիւն ունէին :

Բայց, Անտիոքոսէ յետոյ, Սելեւկեանները տկարացան՝ հպատակ ազգերու ապստամբութեանց պատճառաւ :

Այս տոնները Հռոմը զօրացած, Կարկեղոնը կործանած և իր ուշադրութիւնը դէպի արեւելք դարձուցած էր : Ան կ'ուզէր տիրել Սելեւկեան երկիրներուն : Իր նպատակին հասնելու համար Հռոմի կառավարութիւնը կը քաջալերէր Սելեւկեաններու տիրապետութեան ենթակայ ազգերը որ ապստամբին : Այսպէս է որ, 190 թուականին, երբ Մագնէզիա քաղաքին քով Սելեւկեանները պարտուեցան Հռոմէն, Հայաստանի երկու սատրապները և Պոնտացիք ինքզինքնին անկախ յայտարարեցին : Փոքր Հայքը արդէն իր թագաւորութիւնը ունէր, որով Հայաստանը բաժնուեցաւ երեք մասերու :

Այս երեք մասերէն ամենէն կարեւորն էր Արտաշէսի թագաւորութիւնը, Արարտեան նահանգին մէջ, որուն մայրաքաղաքն էր Արտաշատ :

Բաջ և հայրենասէր Արտաշէս չբաւականանալով իր ունեցած երկրովը, ձեռնարկեց աշխարհակալութեանց և գրաւեց Հայաստանի այն ծայրամասերը որոնք ուրիշներու իշխանութեան տակ էին :

Նոյնը ըրաւ նաեւ Զարեհ, որ երբ մեռաւ Արտաշէս փորձեց գրաւել անոր երկիրն ալ (Մոփք), բայց չյաջողեցաւ, որովհետեւ Զարեհի որդին Մերուժան ուրիշներու օգնութեամբ ետ առաւ իր հօր երկիրը :

Ասկէ յետոյ Արտաշէս ձեռնարկեց իր երկրի բարեկարգութեան. դրաւ նոր օրէնքներ և կարգ ու կանոնի տակ առաւ նախարարները :

Բա. է 165 տարի առաջ Սելեւկեանները զօրանալով կրկին փորձեցին տիրել Հայաստանի : Արտաշէս պարտուեցաւ և ընդունեց անոնց զերիշխանութիւնը : Բայց յետոյ դաշնակցելով Մեդացիներու հետ յողթեց և վերջնականապէս ազատուեցաւ Սելեւկեաններու լուծէն :


Այս տեղեկութիւնները մենք կ'առնենք օտար պատմագիրներէն, որոնք անկէ յետոյ կը լռեն : Մեր ազգային հէքեաթներէն կ'իմանանք Արտաշէսի Ալանաց դէմ մղած պատերազմը և Սաթենիկի հետ մուսնութեան պատմութիւնը : Արտաշէսի մահը և յուղարկուորութիւնը, և իր յաջորդ՝ Արտաւազդի պատմութիւնը նմանապէս մեր հէքեաթներէն կ'իմանանք :

Իր նոր պետութեան համար Արտաշէս շինեց նոր քաղաք մը և իր անուէնով զայն կոչեց Արտաշատ : Ան կը գտնուէր Երասխ գետին մօտերը : Անիկա եղաւ ունեւորական կեդրոն մը և երկար ժամանակ՝ մայրաքաղաք Հայաստանի : Ստրաբոն յոյն պատմիչը զայն անուանած է «Գեղեցիկ» քաղաք :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ գիտենք Արտաշէսան հարստութեան մասին : Ի՞նչ պարագաներու մէջ հաստատուեցաւ ան : Ի՞նչ ըրին Արտաշէս եւ Զարեհ : Ի՞նչ ըրին, յետոյ, Սելեւկեանները : Ո՞ւրկէ կ'առնենք մենք այս տեղեկութիւնները :

# Դ Ա Ս Ը.

## ՏԻԳՐԱՆ Գ. ՄԵԾԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ.— Արաաշէս Ա.էն յետոյ մինչեւ Մեծն Տիգրան բաւական ժամանակ անցած էր և Հայեր ունեցած էին երկու թագաւորներ — Արտաւազդ Ա. և Տիգրան Բ.: Այս շրջանին Պարսկաստանի Պարթեւ թագաւորութիւնը շատ զօրացած էր և Հայաստանէն խըլած էր կարգ մը մասեր: Պարթեւաց Միհրդատ թագաւորը նոյն իսկ Հայոց արքայորդին՝ Տիգրանը՝ պատանդ տարած էր և անկէ 70 հովիտներ ստանալով ազատ ձգած էր: Տիգրան վերադառնալով Հայաստան իր հօր գահը բարձրացաւ:



Մեծն Տիգրան

Այս տառններ Հայաստանի հիւսիսային կողմը զօրացած էր Պոնտոսը, որուն թագաւորն էր նշանաւորն Միհրդատ, որ նպատակ դրած էր իր երկիրը ընդարձակել արեւմուտքի կողմէն, Ասիայէն դուրս վաճառելով Հռոմայեցիները: Ասիկա առանց կռիւի չէր ըլլար: Ժամանակները նպատատուր էին Միհրդատի, որովհետեւ Հռոմ ներքին կռիւներու մէջ էր, իսկ Յունաստան և Փոքր Ասիա իրմէ ապստամբած էին: Միհրդատի ծրուագիրը օգտակար էր նաեւ Տիգրանի համար, ուստի, երկու թագաւորները գաղտնի դաշինք մը



Միհրդատ

կնքեցին միասին կռուելու համար, պայմանաւ որ զըրաւուած երկիրները Միհրդատին մնան, իսկ աւարը՝ Տիգրանին: Եւ այս դաշինքը զօրացնելու համար Տիգրան ամուսնացաւ Միհրդատի աղջկան՝ Կղէոպատրայի հետ:

Իրենց պատրաստութիւնները լրացնելէ յետոյ, դաշնակիցները նախ արշաւեցին Կապադովկիոյ վրայ, որուն թագաւորը Հռոմայեցոց բարեկամ էր, և գրաւեցին զայն: Տիգրան գրաւեց և իր երկրին միացուց նաեւ Ծոփաց երկիրը, իսկ Փոքր Հայքը ստացաւ Միհրդատ:

Այս տառններ Պարսկաստան եւս խռովութեան մէջ էր: Ներքին խռովութեան մէջ էին նաեւ Սելեւկեան թագաւորութիւնը, Փոքր Ասիա՝ որ Հռոմի գերիշխանութեան տակ էր՝ և Յունաստան՝ որ սպասամբած էր Հռոմէն: Իսկ Հռոմ զբաղած էր Պլէպեաններու և Պատրիկեաններու կռիւներովը: Տիգրան և Միհրդատ, օգտուելով այս առիթէն, շատ մը տեղեր գրաւեցին, մինչեւ որ Հռոմ ստիպուեցաւ անոնց դէմ Ղրկել Սիլլա զօրավարը, որ սակայն շուտ ետ դարձաւ: Հռոմի ներքին կռիւները զսպելու համար: Տիգրան և Միհրդատ շարունակեցին իրենց արշաւանքները: Երկրորդ անգամ Կապոդովկիան գրաւելէ յետոյ, Միհրդատ անցաւ դէպի արեւմուտք, մտաւ Եւրոպա և ջարդելով հռոմէական բանակը, գրաւեց Յունաստանը:

Ասդին, Տիգրան, իրեն ենթարկեց Վրաստանն ու Աղուանքը և օգտուելով Պարսկաստանի ներքին խռովութիւններէն, Պարթեւաց վրայ յարձակեցաւ, ետ առաւ 70 հովիտները և իրեն հնազանդեցուց Կորդուաց երկիրը, Ատրպատականը, Մծբինի և Մեղաստանի թագաւորութիւնները: Պարթեւները ստիպուեցան հաշտութիւն խնդրել և ճանչնալ Տիգրանի գրաւումները:

Տիգրան անկէ յետոյ անցաւ Սելեւկիա և զայն գրաւեց ու իր իշխանութիւնը տարածեց մինչեւ Պաղեստինի սահմանները:

Հայ-Պոնդական այս գրաւումները վերջացան մօտ 70 թուականին: Իաչնակիցները պատերազմած էին մօտ 25 տարի: Տիգրանի պետութեան սահմանները հիմա կը տարածուէին Կուր գետէն մինչեւ Արաբիոյ անապատները և Մեղաստանէն մինչեւ Տաւրոս լեռները:

Տիգրանը այլեւս արքայից արքայ էր և իր երկիրն ալ ընդարձակ կայսրութիւն մը:

Տիգրան, անկէ յետոյ, զբաղեցաւ իր երկրին ամրացումովը: Այս նպատակով ան Հայաստանի հարաւակողմը շինեց երկրորդ մայրաքաղաք մը՝ Տիգրանակերտ, որուն շքեղութեան համար ծախս չխնայեց: Այս նորաշէն քաղաքին բնակիչները կը կազմէին պատերազմներու տառն բերուած զերիները, մանաւանդ Յոյներ: Տիգրան լաւ վերաբերում ցոյց կուտար այս գաղթականներուն որպէսզի անոնք Հայաստանի մէջ զարգացնեն սոսկեւորը և արհեստները:

Տիգրան դրաւ նոր օրէնքներ և կարգ ու կանոն: Երկրին սահմաններուն պաշտպանութիւնը յանձնեց մեծ նախարարներու որոնք բղեշխ կը կոչուէին: Հիւսիսային կողմը՝ Գուգարաց, արեւմտեան կողմը՝ Մոփաց, հարաւային կողմը՝ Աղձնեաց իսկ արեւելեան կողմը՝ Նոշիրական բղեշխութիւններուն պաշտպանութեանը յանձնուեցան:

Տիգրանի բանակը մօտ 500,000 հոգիէ կը բաղկանար, սակայն այդ զինուորները վարձկան էին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպէս էր Հայաստանի վիճակը Արտաշէսէ յետոյ: Ո՞վ էր Միհրդատը եւ ի՞նչ էր իր նպատակը: Ի՞նչ ըրին Տիգրան և Միհրդատ, ի՞նչ պարագաներ կ'օգնէին իրենց յաղթանակներուն: Ո՞ր երկիրները գրաւեց Տիգրան: Ներքին ի՞նչ կարգադրութիւններ ըրաւ ան:

**Դ Ա Մ Թ .**

**ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ  
ԵՒ ՏԻԳՐԱՆԻ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ  
ՔԱՅՔԱՅՈՒՄԸ**



**ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ .**

Որքան տանն որ Տիգրանի գործը շրջակայ ազգերուն հետ էր, իր պատերազմները միշտ յաջողութեամբ վերջացան: Սակայն երբ ան դէմ դէմի եկաւ հռոմէական կազմակերպուած բանակին հետ, իր բախտին անիւր դարձաւ:

Հայ-հռոմէական պատերազմներուն պատճառը եղաւ իր աները՝ Միհրդատ, իր անհանդարտ բնաւորութիւնովը և Հռոմի դէմ ունեցած ատելութեամբը:

**ԼՈՒԿՈՒԼԼՈՍ .** — Ներքին խռովութիւնները զսպելէ յետոյ, Հռոմի Ծերակոյտը արեւելք շրջեց Լուկուլլոս զօրապետը: Միհրդատ քաջուեցաւ Պոնտոս ուր հասաւ նոսե Լուկուլլոսը և Միհրդատ ստիպուեցաւ փախչիլ Հայաստան: Տիգրան զայն հեռացուց Հայաստանի արեւելեան գաւառները ուր ան մնաց երկու տարի: Ասոր ալ պատճառը այն էր որ, նախ, Տիգրան կը կատկածէր իր դաշնակիցէն, և երկրորդ՝ չէր ուզեր անոր պատճառաւ գէշ մարդ ըլլալ Հռոմայեցիներու հետ:

Սակայն Լուկուլլոս Պոնտոսը գրաւելէ յետոյ մօ-


տեցաւ Հայաստանի և պահանջեց Տիգրանէն որ Միհրդատը իրեն յանձնէ: Տիգրան մերժեց (70 Ն.Ք.Ք.) և ետ կանչելով Միհրդատը, անոր տուաւ 10,000 զօրք և շրջեց Պոնտոս Հռոմայեցիք անկէ վաճառելու համար: Լուկուլլոս մտաւ Հայաստան և պաշարեց Տիգրանուկերաը: Լուկուլլոսի բանակը քիչ էր, սակայն լուկրթուած, իսկ Տիգրանինը շատ՝ բայց անկազմակերպ: Ու Տիգրան պարտուեցաւ ու քաջուեցաւ դէպի Արտաշատ: Տիգրանակերտի Յոյները դաւաճանութեամբ քաշաքը յանձնեցին Լուկուլլոսի, Հռոմայեցիք քաղաքը և Տիգրանի գանձերը կողոպտեցին:

Զմեռը ամբողջ հանգստանալէ և երկու կողմէն պատրաստութիւն տեսնելէ յետոյ, 68ի գարնան, Լուկուլլոս մտաւ Հայաստանի ներսերը: Սակայն Հայաստանի լեռնային ճամբաները, Տիգրանի յաճախակի յարձակումները և ժողովուրդին թշնամական ընթացքը մեծ նեղութիւն կը պատճառէին Լուկուլլոսին: Իր զօրքը սպստամբեցաւ իր դէմ և Լուկուլլոս զուրկ'աղաչէր որ շարունակեն արշաւանքը: Լուկուլլոս ստիպուեցաւ երթալ դէպի հարաւ. գրաւեց Մծբինը և անցաւ Փոքր Ասիոյ Տիգրան և Միհրդատ շուտով վերադարձեցին կորսուած երկիրները: Տիգրան գրաւեց նաեւ Կապադովկիան:

**ՊՈՄՊԷՆՍ ԵՒ ԱՐՏԱՇԱՏԻ ԴԱՇԻՆՔԸ .** — Հռոմի Ծերակոյտը, դժգոհ Լուկուլլոսէն, զայն պաշտօնէ հանեց և արեւելք շրջեց Պոմպէոս զօրապետը: Կռիւր վերսկսաւ:

Սակայն Տիգրանի համար հիմա պայմանները շատ աննպաստ էին: Նախ՝ ինք ձերացած էր: Յետոյ՝ իր որդիները իրմէ ապստամբած էին: Անդրանիկը՝ Զա-

րեհ՝ մահուամբ պատժուեցաւ հօրը կողմէ, իսկ կրտսե-  
րը՝ Տիգրան՝ փախած էր իր աներոջ՝ Պարթեւոց թա-  
գաւորին քով, և զայն կը գրգռէր իր հօրը դէմ: Ասկէ



Պոմպէոս

զատ, Տիգրան, իր դաշնակիցներուն վրայ ալ վստահ  
չէր:

Կրտսերն Տիգրան պարթեւ զօրքով եկաւ իր հօր  
վրայ, սակայն պարտուեցաւ և այս անգամ փախաւ

դէպի Պոնտոս: Տիգրան այս պատճառաւ կասկածեցաւ  
նաեւ Միհրդատէն և խզեց դաշնակցութիւնը:

Միհրդատի վիճակն ալ լաւ չէր: Իր դէմ դժգո-  
հութիւններ կային և որդին ալ ապստամբելով իր դէմ  
Պոմպէոսին միացած էր: Կրտսերն Տիգրան ալ, այս  
տեսնելով, գնաց Պոմպէոսի բանակը: Միհրդատ յաղ-  
թուեցաւ և անձնասպան եղաւ:

Այս պայմաններու մէջ Մեծն Տիգրան չուզեց պա-  
տերազմը շարունակել և երբ Պոմպէոս հասաւ մինչև  
Արտաշատ (65 ին), Տիգրան անոր բանակը գնաց և  
հաշտուեցաւ:

Այդ հաշտութեան գլխաւոր պայմաններն էին.

1. Տիգրանի պիսի մնային միայն Հայաստանը, Կոր-  
դուած աւխարհն ու Միջագետքը.
2. Ծովքը կը յանձնուէր կրտսերն Տիգրանին, Ասր-  
պասականը՝ Պարթեւերուն եւն.
3. 600 սաղանգ տուածք եւ իւրաքանչիւր զինուո-  
րի ալ նուէր մը պիսի տար Տիգրան.
4. Հայ բազաւորները Հռոմի հաւանութեամբը գան  
պիսի բարձրանային եւ բարեկամ պիսի մնային Հռո-  
մին:

Այս հաշտութիւնը նպաստուոր չէր կրտսերն Տիգ-  
րանի որ դաւադրութիւն կազմեց հօրը և Պոմպէոսի  
դէմ: Խնդիրը իմացուելով, կրտսերն Տիգրան շղթայա-  
կապ Հռոմ տարուեցաւ ուր և սպաննուեցաւ: Տիգրան  
թագաւորեց մինչև 55 թուականը:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Հայ-հռոմէական պատերազմներուն պատ-  
ճառը ո՞վ եղաւ: Ինչո՞ւ արեւելք եկաւ Լուկուլլոս եւ ի՞նչ քրաւ:  
Ի՞նչպէս վերջացաւ իր արշաւանքը: Ո՞վ յաջորդեց Լուկուլլոսի,  
ինչո՞ւ Տիգրան ստիպուեցաւ հաշտուիլ անոր հետ: Որո՞նք են  
Արտաշատի դաշինքին պայմանները:

Դ Ա Ս Ժ.

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԷ ՅԵՏՈՅ ԱՐՏԱԽԱԶԳԻ Բ.



ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԷ ՅԵՏՈՅ. — Մեծն Տիգրանի ժամանակ Հայաստան դուրս ելլալով իր սահմաններէն կարեւոր դեր մը խաղաց արեւելքի մէջ՝ Արտաշատի դաշինքը վերջ տուաւ հայկական կայսրութեան և Հայաստան ամփոփուեցաւ իր ազգային սահմաններուն մէջ:

Արտաշատի դաշինքը տկարացուց թագաւորական իշխանութիւնը և մեր երկիրը ենթարկուեցաւ հռոմէական և պարսկական ազդեցութեանց: Այս վիճակէն օգտուեցան հայ նախարարները որոնցմէ ոմանք պարսկասէր և ոմանք այ հռոմէասէր դարձան: Յառաջ եկաւ Երկու ուղղութիւն, երկու կուսակցութիւն:

Հայաստան, իր բնական դիրքին պատճառաւ, կարեւոր է շրջակայ երկիրներու տիրապետութեան տեսակէտէն: Այս պատճառաւ Հռոմ և Պարսկաստան երկարատեւ ու կատաղի կռիւներ մղեցին Հայաստանին տիրելու համար: Այս պատերազմները յաճախ մեր երկրին մէջ տեղի ունեցան որոնցմէ Հայաստան մեծապէս վնասուեցաւ:

ԱՐՏԱԽԱԶԳԻ Բ. ՀՌՈՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ. — Տիգրանին յաջորդեց իր որդին Արտաւազդ, որ

հելլենական կրթութիւն ստացած մարդ էր: Ան ծանօթ է որպէս թաւերազիր, բայց իր գրութիւններէն բան մը չէ հասած մեզի:

Իր օրով Հռոմի մէջ կազմուեցաւ առաջին Եռապետութիւնը, որուն մէկ անդամը՝ Կրասոս՝ արեւելք եկաւ յաղթանակներ, հարստութիւն և փառք վասակելու համար: Ան առանց պատճառի պատերազմ բացաւ Պարթեւաց դէմ: Արտաշատի դաշինքին համաձայն Արտաւազդ պարտաւոր էր օգնել Հռոմայեցոց: Արտաւազդ Բ. խորհուրդ տուաւ Կրասոսի Հայաստան գալ և



Արտաւազդ Բ.ի դրամը

միասին Պարթեւաց վրայ քաշել: Սակայն սմարտաւանն Կրասոս մերժեց այս առաջարկը և Միջագետքի կողմէն առաջացաւ Պարթեւաց վրայ: Պարթեւաց Որոտ Ա. թագաւորը Կրասոսի դէմ զրկեց իր Սուբէն զօրապետը, իսկ ինքը բանակով մտաւ Հայաստան, որպէսզի արգիլէ Հայոց գործակցութիւնը Կրասոսի բանակին: Կրասոս պարտուեցաւ և սպաննուեցաւ և Արտաւազդ բարեկամացաւ Պարթեւաց հետ, տալով իր քոյրը Որոտի տղուն՝ Բակուրի:

Քիչ յետոյ Հռոմի մէջ կազմուեցաւ երկրորդ Եռապետութիւնը որուն մէկ անդամին՝ Անտոնիոսին՝ ինչպէս արեւելքը: Ասոր մէկ զօրապետը, նոր պատերազմ




մի մը մէջ յաղթեց Պարթեւներուն և Արտաւազդ ըստիպուեցաւ դարձեալ Հռոմայեցւոց կողմը անցնիլ: Յետոյ Պարթեւաց վրայ եկաւ ինքը՝ Անտոնիոս: Արտաւազդ 13,000 զօրքով միացաւ իրեն, սակայն պատերազմը վերջացաւ ի նպաստ Պարթեւներուն: Անտոնիոս քաջուեցաւ Հայաստան, սպա՝ Եգիպտոս, և իր պարտութեան պատճառը Արտաւազդը համարեց: Որոշելով զայն պատմել, ուզեց Հայոց արքան Եգիպտոս տանիլ: Երբ յաջուեցաւ, բանակով արշաւեց Հայաստան, նինքու թեամբ բռնեց Արտաւազդը և կնոջը ու զաւակներուն հետ շրջթայակապ Ադեքսանդրիա տարաւ, կողոպտելէ յետոյ արքունական գանձը: Արտաւազդ դիտատուեցաւ Եգիպտոսի մէջ Ն.Ք.Ք. 31 թուականին: Անտոնիոսի այս կոպիտ վերաբերումը Հռոմի դաշնակից Հայոց հետ պատճառ եղաւ որ իր հակառակորդը՝ Ոկտաւիանոս Օգոստոս՝ պատերազմի ձեռնարկէ իրեն դէմ, որուն մէջ ինքը՝ Անտոնիոս և Եգիպտոսի թագուէին՝ Կլոօդիպատրոս՝ սպաննուեցան և Եգիպտոս վերածուեցաւ Հռոմէական նահանգի մը: Այս լուրը երբ իմացուեցաւ



Անտոնիոս

31 թուականին: Անտոնիոսի այս կոպիտ վերաբերումը Հռոմի դաշնակից Հայոց հետ պատճառ եղաւ որ իր հակառակորդը՝ Ոկտաւիանոս Օգոստոս՝ պատերազմի ձեռնարկէ իրեն դէմ, որուն մէջ ինքը՝ Անտոնիոս և Եգիպտոսի թագուէին՝ Կլոօդիպատրոս՝ սպաննուեցան և Եգիպտոս վերածուեցաւ Հռոմէական նահանգի մը: Այս լուրը երբ իմացուեցաւ

Հայաստանի մէջ, Հայերը Արտաշէս թագաւորին առաջնորդութեամբ ապստամբեցան ու ջարդեցին հռոմէական պահակազօրքը: Բայց շուտով Արտաշէս եւս սպաննուեցաւ և իրեն յաջորդեց Տիգրան Դ:



Օգոստոս Կայսր

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.— Արտաշէսեան հարստութիւնը տակաւին տանն մը եւս

չարունակուեցաւ, սակայն վերջին թագաւորները չը կրցան կարեւոր գործ մը կատարել: Հռոմէա-պարթեւական մեծ պատերազմները տկարացուցին մեր երկիրը և տկարացուցին թագաւորական իշխանութիւնը: Արտաշէսեան հարստութեան անկման նպաստեցին նաեւ հայ նախարարները, որոնք այս խառնաշփոթութեանց միջոցին շատ զօրացեր էին և ալ չէին ուզեր ենթարկուիլ թագաւորին գերիշխանութեան:

Արտաշէսեան հարստութիւնը վերջացաւ Քրիստոսէ վերջ 14 թուականին:



Մեծն Տիգրանի դրամը

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Մեծն Տիգրանի ժամանակ ի՞նչպէս էր Հայաստանի դիրքը եւ ի՞նչ արդիւնք ունեցաւ Արտաշատի դաշինքը: Ի՞նչպիսի թագաւոր մը եղաւ Արտաւազդ. ի՞նչ դիրք բռնեց ան Հռոմ-պարսկական պատերազմին մէջ: Ի՞նչպէս վերջացան այդ պատերազմները: Ի՞նչպիսի վախճան ունեցաւ Արտաւազդ: Ի՞նչպէս վերջացաւ Արտաշէսեան հարստութիւնը:

### Գ Ա Ս Ժ Ա.

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ



ՕՏԱՐ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ.— Արտաշէսեան հարստութեան վերջնական կործանումէն յետոյ Հայաստան կէս դարու չափ խառնակ շրջան մը ապրեցաւ: Այս շրջանին մեր երկիրը խաղալիք դարձաւ Հռոմայեցւոց, Պարթեւոց և Վրացւոց միջեւ, որոնք աշխատեցան իրենցմէ թագաւորներ դնել Հայաստանի վրայ, զայն իրենց հետ ունենալու նպատակաւ: Այս պատճառաւ բազմաթիւ պատերազմներ տեղի ունեցան և նորանոր աւերումներու մատնեցին մեր հայրենիքը: Կռուող կողմերը կ'աշխատէին իրենց հետ ունենալ հայ նախարարները որոնց մեծ մասը պարթեւասէր էին: Հայ ժողովուրդը առհասարակ չէր սիրեր Հռոմայեցիները՝ առնոց կռուավարիչներն ու զօրավարները անգութ, ընչաքաղց և խորդախ մարդիկ ըլլալուն, իրենց երկիրը Պարսկաստանին աւելի մօտիկ և Պարսիկներուն հետ ցեղակից ու ազգակից ըլլալուն պատճառաւ:

ՎՈՆՈՆ.— Օգոստոսէ յետոյ հռոմէական կայսրութիւնը տկարացաւ, մինչ ընդհակառակն պարթեւական պետութիւնը զօրացաւ, մանաւանդ երբ զահ բարձրացաւ Արտաւան Գ. (14—40), որ գահէն զրկած էր Վո-

նոն թագաւորը: Սա փոխաւ Հայաստան և եղաւ թագաւոր: Վոնոն հռոմայեաք մէկը ըլլալով հայ պարթեթեւասէր նախորարները, Արտաւանի օգնութեամբ, զայն երկրէն դուրս վաճակեցին: Հռոմ, այն ատեն, Հայաստան զրկեց Գերմանիկոս զօրապետը որ անուանի եղած էր Գերմաններու դէմ վարած իր յաջող պատերազմներովը:


**ՁԵՆՈՆ.**— Գերմանիկոս լաւ վարուեցաւ Հայոց հետ և Հայոց խնդրանքովը թագաւոր նշանակեց Պոնտոսի թագաւորին որդին՝ Ձենոնը, որ իր մանկութիւնը Հայաստանի մէջ անցուցած էր և սիրելի էր անոնց: Ձենոն՝ 15 տարի թագաւորեց և կրցաւ հանդարտ պահել երկու կուսակցութիւնները, մանաւանդ որ Պարթեւոց Արտաւան Գ. թագաւորը զբաղած էր պատերազմներով: Այդ պատերազմները յաջող կերպով վերջացնելէ յետոյ, Արտաւան ուզեց վերականգնել Կիւրոսի կայսրութիւնը և Ձենոնի մահէն յետոյ Հայաստանի վրայ թագաւոր նշանակեց իր որդին Արշակը: Ասոր վրայ Հռոմայեցիք Հայոց դէմ գրգռեցին Վրաց թագաւորը որ իր եղբայրը՝ Միհրդատ կովկասցի բարբարոսներու բանակով մը զրկեց Հայաստան:

**ՄԻՀՐԴԱՏ (35—51).**— Հռոմի կառավարութիւնը կրցաւ խռովութիւններ ստեղծել նաեւ Պարսկաստանի մէջ և Արտաւան Գ. ստիպուեցաւ հաշտ ապրիլ Հռոմայեցոց հետ ու ճանչնալ Միհրդատի թագաւորութիւնը: Աւելի ուշ, երբ Հռոմայեցիք պատերազմներով զբաղած էին Եւրոպայի մէջ, Արտաւան Գ. Հայաստանը վերածեց պարսկական նահանգի մը: Պատերազմը վերանորոգուեցաւ և Պարթեւները պարտուեցան, որով-

հետեւ Արտաւան Գ. ի մահէն վերջ խռովութիւն ծագած էր գահուն շուրջը և իշխանութիւնը տկարացած:

Այս ատեններ Վրաց թագաւորին որդին՝ Հռադամիզդ՝ մեծամեծներու հետ միաբանած, խռովութիւն հանած էր իր երկրին ներսը, հօրը գահուն տիրանալու համար: Հայրը, ազատուելու համար իր աղուն ներկայութենէն, զայն բանակով Հայաստան զրկեց, Հռադամիզդ, իրեն հետ ունենալով Հայ հռոմայեք նախորարները, նենգութեամբ սպաննեց իր հօրեղբայրը և տիրացաւ Հայաստանի գահուն 51 թուականին:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.**— Արտաշէսի հարստութեան կործանումէն յետոյ ի՞նչ վիճակ ստեղծուեցաւ Հայաստանի համար: Ինչո՞ւ Հայերը մեծամասնութեամբ պարթեւասէր էին: Ո՞վ էր Վոնոն և ի՞նչ ըրաւ: Ո՞վ էր Ձենոն և ի՞նչպէս թագաւոր եղաւ: Իրմէ յետոյ ո՞վ գահ բարձրացաւ: Ի՞նչ գիտէր Միհրդատի և Հռադամիզդի մասին:




Պարթեւ սպառազէն զինուոր մը

# ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ (66—428)

## ԴԱՍ ԺԲ.

### ՏՐԴԱՏ Ա.



**ԱՐՇԱԿՈՒՆԻՔ.**— Արշակունիները ծագումով հայ չէին, այլ պարթեւ Պարսկաստանի մէջ պարթեւական հարստութեան հիմնադիրը եղած էր Արշակ Ա. որուն անունովը իր յաջորդներն ալ կոչուեցան Արշակունի:

Քրիստոսէ յետոյ 66 թուականին Հայաստանի գահը անցաւ Արշակունեաց ձեռքը և սուաւ 20 թագաւորներ: Արշակունիները Հայաստանի գահուն վրայ հայտցան և մեր պատմութեան մէջ բռնեցին կարեւոր տեղ մը: Արշակունեաց հարստութիւնը տեւեց 66էն մինչեւ 428 թուականը, այսինքն 362 տարի:

**ՏՐԴԱՏ Ա.** (52—59 և 66—75). — Քրիստոսի 51 թուականէն մինչեւ 77ը Պարսկաստանի վրայ կ'իշխէր Վաղարշ Ա., որ թէեւ անգութ և անողոք, բայց միեւնոյն տանն մեծագործ և աշխարհաշէն մարդ էր: Վաղարշ Ա. ուզելով գոհացնել իր մեծ և փոքր եղբայրները, առաջինը՝ Բակուր՝ նշանակեց Մարաստանի, իսկ փոքրը՝ Տրդատ՝ Հայաստանի վրայ թագաւոր: Ինքը՝ Վաղարշ՝ կը մնար արքայից արքայ, և ինքը միայն իրաւունք կ'ունենար դրամ կարելու: Այս պատ-

ճառաւ ալ հայ Արշակունիներէն բնաւ դրամ հասած չէ մեզի:

Տրդատ Ա., ուրեմն, պարթեւական զօրքով մտաւ Հայաստան, ախրանալու համար գահուն: Հոտգամիզդ, որ իր բռնութիւններովը ատելի դարձած էր Հայոց, փախաւ, և Արատշատ ու Տիգրանակերտ քաղաքները յանձնուեցան Տրդատի:

Սակայն, Տրդատ, ստիպուեցաւ շուտով ետ դարձնել իր զօրքերը ցուրտի, պաշարի չգոյութեան և ժամտախտի պատճառաւ:

Օգտուելով աւիթէն, Հոտգամիզդ կըրկին ետ դարձաւ և մեծ նեղութիւններ տուաւ ժողովրդեան, որ ապրստամբեցաւ և փախցուց զայն:

**ԿՈՐԲՈՒՂՈՆ .** —

Հոռմի կայսրը՝ Ներոն՝ լսելով որ Պարթեւները գրաւած են Հայաստանը, զրկեց կորբուղոն անուանի զօրավարը որ ստուար




Տրդատ Ա.

գունդերով յառաջացաւ մինչեւ Արտաշատ մայրաքաղաքը, ուրկէ հեռացած էր Տրդատը: Քաղաքացիք, առանց դիմադրութեան անձնատուր եղան, իսկ Կորբուզոն, ձմեռը հոն անցնելէ յետոյ, գարնան քաղաքը այրեց և հեռացաւ Տիգրանակերտ, որ նմանապէս անձնատուր եղաւ: Կորբուզոն Հայաստանի վրայ թագաւոր նշանակեց Տիգրան անուշով մէկը, ծագումով հրեայ և զրկուած Ներոն կայսեր կողմէ:

**ՀՈՒՄՍՅԵՑԻՈՅ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ.**— Ա.բայից արքան և իր մեծամեծները,

լսելով Հայաստանի մէջ պատահածները շատ զայրացան: Վաղարշ Ա. իր մեծամեծներուն ներկայութեանը եզրայրը Հայոց թագաւոր պըսակեց և բանակով Հայաստան զրկեց, ինքն ալ Միջագետքի կողմէն թշնամիին վրայ յարձակեցաւ: Կորբուզոն, վախնալով որ պիտի պարտուի, հրաժարած էր և իրեն յաջորդած էր Պետոս զօրավարը, որ սարսափելի պարտութիւն մը կրեց Պարթեւներէն և ամօթալի դաշինքով մը ամէն բան յաղթողին թողուց ու հեռացաւ Հայաստանէն:

Պետոս դեռ Պարթեւներու հետ չպատերազմած՝ նամակներով իմացուցած



Կորբուզոն

էր Ներոնի թէ յաղթանակը տարած էր: Այս նամակներուն վրայ Հռոմի մէջ մեծ հանդիսութիւններ ընելու կը պատրաստուէին, երբ Պարթեւաց պատգամաւորները հասան Հռոմ խնդրելու որ Տրդատի տրուի Հայոց գահը: Կայսրը զարմացաւ, որովհետեւ Պետոսի նամակները ուրիշ բան կ'ըսէին: Այն տտեն Ներոն հարցուց Պետոսի նամակաբերներուն ընկերացող Հռոմայեցի հարիւրապետին թէ ի՞նչ է կացութիւնը Հայաստանի մէջ: Հարիւրապետը ըսաւ թէ բոլոր Հռոմայեցիք քաշուած են Հայաստանէն: Կայսրը հասկցաւ թէ Պարթեւները իր վրայ կը խնդային և մերժեց ճանչնալ ստորագրուած դաշինքը ու հրամայեց Կորբուզոնի վերսկսիլ պատերազմը:


ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ գիտէր Արշակունիներու ծագման մասին: Ո՞վ էր Վաղարշ Ա. և ի՞նչ նոր կարգադրութիւն ըրաւ: Ի՞նչ ըրաւ Տրդատ: Ի՞նչ ըրին Հռոմայեցիք. պատմել Կորբուզոնի գործունէութիւնը Հայաստանի մէջ: Ո՞վ յաջորդեց Կորբուզոնի և ի՞նչ ըրաւ:



### Դ Ա Ս Ժ Գ .

## ՀՌՈՄԱՅԵՑԻՈՑ ԵՒ ՊԱՐՄԻՑ

### ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ



ՏՐԴԱՏԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՀՌՈՄ . —

Կորբուզոն , նոր պատերազմի հրամանը առնելով , մեծ պատրաստութեամբ սկսաւ Հայաստանի վրայ արշաւել 63 թուականին : Սակայն Պարսիկները հաշտութիւն տալարկեցին , և Կորբուզոն ընդունեց :

Հաշտութեան պայմանները հետեւեալներն էին .

1. Տրդատ կը նանչցուի Հայասանի քաղաւոր .
2. Տրդատ Հայասանի քաղը պիտի ստանայ Ներոնէն , Հռոմի մեջ :

Այս համաձայնութեամբ Հայաստանի համար մղուած շուրջ հարիւրամեայ պատերազմները կը վերջանային և Հայաստանի թագը կ'անցնէր Արշակունիներուն :

Յաջորդ տարի Տրդատ գնաց Հռոմ . իրեն կ'ընկերանային իր կինը , զաւակները , և պարսիկ ու հայ մեծամեծներ , ղինուորներ , մօտ 3000 հոգի : Տրդատ ճամբորդեց ցամաքով և ոչ թէ ծովով , որովհետեւ ինք զրադաշտական էր և այդ կրօնքը կը պատուիրէր որ ջուրը մաքուր պահուի : Այս ճամբորդութիւնը տեւեց մօտ ինը ամիս և ամբողջ ծախքերը Հռոմի կառավարութիւնը հոգաց : Բոլոր քաղաքներու մէջ ան ընդունուեցաւ մեծ պատիւներով :

ՏՐԴԱՏ ՀՌՈՄԻ ՄԷՋ . — Ներոն կայսրը մեծ հանդիսութիւնով Տրդատի գլուխը դրուաւ Հայոց թագը 66 թուին : Հանդէսներէ և խնճոյքներէ յետոյ , Պոմպէոսի թատրոնին մէջ , ի պատիւ Տրդատի արուեստաւ ներկայացում մը : Չորս կողմը ոսկիով ծածկուած էր և ներկաները հագած էին ոսկեթել հագուստներ : Ժողովուրդը , այդ օրը «Ոսկեղէն օր» անուանեց : Կրկէսին մէջ , Ներոն , Ապոլոնի հագուստով , ի պատիւ Հայոց թագաւորին կառապանութիւնը բաւ և կիթառի ընկերակցութեամբ երգեց : Յետոյ , կայսրը , իր ձեռքովը գոցեց Յանոսի տաճարին դուռները . ի նշան խաղաղութեան ծովու և ցամաքի վրայ :



Ներոն կայսրը

ՎԵՐԱԴԱՐՁԸ . — Ներոն շատ մեծ սիրով կապուեցաւ Տրդատի հետ , որուն համար մեծամեծ ծախսեր բաւ :

Վերադարձի առնալ նոր տուաւ մօտ 9,500,000 ֆր . և վարպետներ՝ վերաշինելու համար Արտաշատ մայրաքաղաքը զոր Կորբուզոն կործանած էր : Ներոն , որ չէր սիրուեր իր ժողովուրդէն , ընդհակառակն սիրելի եղաւ Հայոց և Պարսից : Տրդատ , վերաշինելով Արտաշատը , զայն անուանեց Ներոնիա :

ՀԱՅԱՍՏԱՆ ՏՐԴԱՏԻ ԺԱՄԱՆԱԿ . — Այս դէպքե-

րէն յետոյ, Հայաստան մօտ կէս դար խողաղ շրջան մը ունեցաւ և երկիրը յառաջդիմեց: Հայաստան միայն ձեւականօրէն կախում ունէր Հռոմէն կամ Պարսկաստանէն և ներքին գործերու մէջ անկախ էր:

Տրդատի հիմնած պետութիւնը տեւեց 362 տարի: 62էն մինչեւ 226 թուականը, Տրդատի յաջորդները, Պարսկաստանի աջակցութեամբ պայքարեցան Հռոմի դէմ: 226 թուականին, երբ Պարսկաստանի մէջ պարթև Արշակունիներուն յաջորդեցին Սասանեանն երբ, մեր Արշակունի թագաւորները հակեցան դէպի արեւմուտք, ինքզինքնին պաշտպանելու համար Սասանեաններու դէմ: Այս շրջանն ալ տեւեց 226էն 428:

Տրդատ նոր օրէնքներ դրաւ Հայաստանի մէջ ու նոր կարգ՝ նախարարական տուներու միջեւ:

Ան միայն մէկ անգամ գէնքի դիմեց երկիրը պաշտպանելու համար Ալաններու դէմ, որոնք երկու արշաւանքներ գործեցին, բայց յաղթուեցան:

**ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԵՍՑ ՕՐՈՎ.**— Հայաստան Արշակունեաց օրով այնքան մեծ չէր որքան Մեծն Տիգրանի ժամանակ: Արշակունեաց ատեն Հայաստանի սահմաններն էին հարաւէն՝ Միջագետք, արեւմուտքէն՝ Եփրատ գետ, հիւսիսէն՝ Կուր գետ, իսկ արեւելքէն՝ Ատրպատական:


**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.**— Ինչո՞ւ եւ ի՞նչ պայմաներով Տրդատ ժամբորդեց դէպի Հռոմ: Ի՞նչպէս ընդունուեցաւ ներսն կայսեր կողմէ: Ի՞նչպէս վերադարձաւ: Ի՞նչպէս էր Հայաստանը Տրդատի ժամանակ: Ի՞նչպէս էր Հայաստանը Արշակունեաց շրջանին:

**Դ Ա Ս Ժ Դ .**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՏՐԴԱՏԻ ՅԱՉՈՐԴՆԵՐՈՒՆ ՕՐՈՎ**

(75—226)



**ՍԱՆԱՏՐՈՒԿ.**— Տրդատ Ա. ին յաջորդած է, կ'ըսուելի, Սանատրուկ, որ Եփրատի և Արածանիի իրարու խառնուած տեղը քաղաք մը շինեց և անոր մէջ էր արձանը կանգնել տուաւ, ձեռքը դրամ մը բռնած, հասկցնելու համար թէ այդ քաղաքին վրայ ծախսած է պետութեան բոլոր գանձը:

**ԱՇԽԱԹԱՐ ԵՒ ՊԱՐԹԱՄԱՍԻՐ.**— Սանատրուկի մտէն յետոյ, Պարսից թագաւորը Հայաստանի գահուն լրայ նստեցուց իր որդին Աշխաթար, իսկ յետոյ Պարթամասիր՝ առանց Հռոմի հաւանութեան, և ասիկա պատճառ եղաւ նոր պատերազմի: Տրայեսնոս կայսրը Հայաստանը հռոմէական նահանգ մը դարձնելու նպատակաւ արշաւեց արեւելք. Եկեղեաց գաւառին մէջ իրեն ներկայացաւ Պարթամասիրը, անոր ձեռքէն ընդունելու համար թաղը, ինչպէս ըրած էր Տրդատ Ա.ը: Սակայն կայսրը մերժեց և խարդախութեամբ սպաննել տուաւ զայն: Ասոր վրայ Հայաստանի հիւսիսա կողմի ազգերը հպատակեցան կայսեր, որ յետոյ մտաւ

Պարսկաստան, գրաւեց և կործանեց անոր մայրաքաղաքը՝ Տիգրան:

ՎԱՂԱՐՇ.— Տրայեանոսի յաջորդը՝ Ադրիանոս՝ հաշտուեցաւ Պարսից հետ և վերադարձուց գրաւուած տեղերը: Այս հաշտութեամբ Հայաստան 40 տարի խաղաղութիւն վայելեց և Հայաստանի թագաւոր եղաւ Վաղարշ, որ բարեկամ մընաց Հռոմի հետ: Ան շինեց Վաղարշապատ քաղաքը:



Վաղարշի օրով եւս Ալանները նոր յարձակում մը ըրին, սակայն պարտուելով ետ դարձան:

ՍՈՅԵՄՈՍ ԵՒ Պարբամասիւ Տրայեանոսի առջեւ ԲԱԿՈՒՐ.— Անտոնիոս Պիոսի յաջորդ Մարկոս Աւրելիանոս Վաղարշը գահէն վար առաւ և անոր տեղ գրաւ Սոյեմոսը: Այս զէպքը պատճառ եղաւ որ Պարթեւները նոր պատերազմի մը ձեռնարկեն և յաջողին Սոյեմոսը վճռուել և գահ բարձրացնել անոր եղբայրը Բակուր: Պատերազմը շարունակուեցաւ, հռոմէական բանակը

մտաւ Հայաստան, և գրաւեց ու կործանեց Արատչատ մայրաքաղաքը: Հայոց հրամանատարն էր Տրդատ առ նուն նախարարը, որ երբ կայսրը զինքը յանդիմանեց իր արարքներուն համար, Տրդատ իր սուրը քաշեց կայսեր գլխուն, բայց ատիկա իրեն ներուեցաւ: Սակայն ձերբակալուելով Բրիտանիա զրկուեցաւ աքսոր: Սոյեմոս նորէն գահ բարձրացաւ:



Տրայեանոսի դրամը


Աջ երեսին վրայ Տրայեանոս կայսրը զօրավարի հագուստով, ձեռքը նիզակ եւ սուր: Եփրատ եւ Տիգրիս գետեր սարածուած են գետնի վրայ եւ ձախ սփին քովը՝ կին մը, որ Հայաստանն է, կապուած: Շուրջը գրուած է «Հայաստան եւ Միջագետք հռոմէական իշխանութեան ենթարկուած»:

ԽՈՍՐՈՎ Ա. ԵՒ ՏՐԴԱՏ Բ.— Պարսից և Հռոմոյեցոց միջեւ կատաղի պատերազմներ եղան նաեւ Խոսրով Ա. և Տրդատ Բ. թագաւորներուն օրով: Ամենէն վերջը Պարթեւները, յաղթական ելան և Հռոմի Մակրինոս կայսրը ստիպուեցաւ հաշտութիւն խնդրել և ճանչնալ Տրդատ Բ.ի թագաւորութիւնը: Սակայն Պարսիկներու այս յաղթանակը չէր կրնար



արգելք ըլլալ Պարթեւ Արշակունիներու հարստութեան քայքայման, և ներքին ապստամբութիւն մը վերջ դրաւ այդ թագաւորութեան և զանուն վրայ բարձրացուց Սասանեան ընտանիքը:

Պարսկաստանի ինչպէս նաեւ Հայաստանի պատմութեան մէջ նոր շրջան մը բացուեցաւ:




Իրամ Անտոնինոս Պիոս կայսեր

Կայսրը թագ կը դնէ Հայոց թագաւորին՝ Սոյեմնոսի գլուխը: Եւրջը ե. «Տուաւ թագաւոր Հայոց, ծեւակոյսին հրամանովը»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞նք եղան Տրդատի անմիջական յաջորդները: Ի՞նչ ընդհանուր երեւոյթ կը տեսնուի անոնց օրով: Ի՞նչ ըրաւ Տրայեանոս կայսրը: Ի՞նչ ըրին Ադրիանոս եւ Անտոնինոս Պիոս կայսրերը: Ի՞նչ պարագաներու մէջ ծանչցուեցաւ Խոսրով Բ.ի թագաւորութիւնը: Ի՞նչ պատահեցաւ, այս ասիներ, Պարսկաստանի մէջ:

### Դ Ա Ս Ժ Ե .

## ՍԱՍԱՆԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ



ՍԱՍԱՆԵԱՆՆԵՐԸ.— Պարսկաստանի Պարթեւական հարստութիւնը, երկարամեայ պատերազմներու և ներքին ապստամբութեանց պատճառաւ տկարացած էր: Այս վիճակէն օգտուեցաւ բուն Պարսկաստանի (Իրանի հարաւակողմ) իշխաններէն Արտաշիւրը, որ միացնելէ յետոյ կարգ մը փոքր իշխանութիւններ և Պարթեւներէն դժգոհ տարրերը, 226 ին ապստամբեցաւ Պարթեւ վերջին թագաւոր Արտաւան Ե.ի դէմ, յաղթեց անոր և զայն սպաննեց ու ինք եղաւ արքայից արքայ:


Պարթեւական իշխանութիւնը, այս կերպով, վերջացաւ և սկսաւ նոր շրջան մը—Սասանեան հարստութեան շրջանը:



ԽՈՍՐՈՎ Բ. — Արշակունեաց Արտաշիւրի դրամը գլխաւոր ճիւղը, այս կերպով, Պարսկաստանի մէջ վերջացաւ, սակայն միւս ճիւղը կը շարունակուէր Հայաստանի մէջ: Բնական էր թէ Արտաշիւր լաւ աչքով պիտի չնայէր Հայաստանին, որուն թագաւորն էր, այս ատեններ, Խոսրով Բ., Տրդատ Բ.ի եղբայրը, որ, իր կարգին, Սասանեաններուն բարեկամ չէր կրնար ըլլալ և գլուխը կեցած էր Արտաշիւրէն դժգոհ բոլոր պարթեւ և պարսիկ իշխաններուն:

Խոսքով բարեկամ չէր կրնար ըլլալ Արտաշիրին նաեւ այն պատճառաւ որ, Պարսկաստանի նոր թագաւորը, նպատակ դրած էր վերականգնել Կիւրոսի կայսրութիւնը և ջնջել բոլոր մանր իշխանութիւնները:

Շուտով պատերազմ մը բորբոքեցաւ Արտաշիրի և Խոսրովի միջեւ: Պարսկաստանի վրայ յարձակեցան նաեւ Վրացիներ, Աղուաններ և հիւսիսային ազգերը և Արտաշիր պարտուեցաւ: Խոսրով Բ. այս յաղթանակը տօնեց Վաղարշապատի մէջ սպիտակ ցուլերով, սպիտակ նոխնագներով, սպիտակ ջորիներով, սպիտակ ձիերով և զօներով ու ճաշկերոյթներով: Յաջորդ տարին, Հռոմայեցւոց օգնութեամբ, Հայերը անգամ մը եւս յաղթեցին Արտաշիրի որ ստիպուեցաւ փախչիլ: Սակայն Խոսրով Բ. չկարողացաւ Պարթեւներուն վերադարձնել Պարսկաստանի թագը:



Շապուհ Ա.

Պատերազմները շարունակուեցան հայ-հռոմէական միացեալ ուժերու և Արտաշիրի յաջորդ Շապուհ Ա.ի միջեւ: Շապուհ գոռոզ և զօրաւոր թագաւոր մըն էր, ու երբ տեսաւ թէ զէնքի ուժով չի կրնար յաղթել Խոսրովին, դիմեց նենգութեան և այդ կերպով սպաննել տուաւ Հայոց թագաւորը: Այս վատ գործը կատարեց Անակ Պահլաւունին, որուն Շապուհ խոստացած էր Քուչաւաց երկրին թագաւորութիւնը:

Սակայն Անակ չհասաւ իր նպատակին, որովհետեւ, Խոսրով, չմեռած պատուիրեց ոչնչացնել անոր ընտանիքը և հայ նախարարները կատարեցին իրենց սիրելի թագաւորին վերջին պատուէրը:

ՀԱՅՍՍՏԱՆ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳ.— Շապուհ, ազատուելով իր մեծ թշնամիէն, մտաւ Հայաստան, և, իբր վրէժ Անակի, բնաջնջել տուաւ Խոսրովի ընտանիքը: Այս կոտորածէն ազատեցաւ Տրդատ արքայորդին և Խոսրովի դուստր՝ Տրդատի քոյրը: Տրդատը փախուցին Հռոմ:

Շապուհ Հայաստանը վերածեց պարսկական նահանգի մը, կործանեց Հայոց հին կուռքերը և հաստատեց կրակի պաշտամունքը:

Հայաստան քառորդ դարու չափ մնաց Պարսից տիրապետութեան տակ: Այս միջոցին Հայաստանի տիրապետութեան համար երկար կռիւներ մղուեցան և Տրդատ քանի մը անգամ գահ բարձրացաւ ու ստիպուեցաւ թողուլ զայն, մինչեւ որ կայսերական գահը բազմեցաւ հռչակաւորն Դիոկղետիանոս կայսրը: Պարսկաստան, այս ատեն, տկարացած ըլլալով ներքին ապստամբութիւններէ և արտաքին կռիւներէ, Վառ Բ. թագաւորի օրով հաշտուեցաւ Հռոմի հետ, ընդունելով անոր բոլոր պահանջները: Հայաստան նորէն հռոմէական ազդեցութեան տակ մտաւ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ի՞նչ պայմաններու մէջ տեղի ունեցաւ Պարսկաստանի արքայական ընտանիքին փոփոխութիւնը: Ո՞վ եղաւ նոր հարստութեան հիմնադիրը: Արտաշիր ի՞նչ ընթացք բռնեց Հայաստանի հանդէպ. ի՞նչ էր իր նպատակը: Ի՞նչ բրաւ Խոսրով Բ.: Ի՞նչ բրաւ Անակ Պահլաւունին: Ի՞նչ եղաւ Հայաստան անկէ յետոյ:

**Դ Ա Ս Ժ Զ.**

**ՏՐԴԱՏ Գ. ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՆՈՒԹԵԱՆ  
ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ (305)**



ՏՐԴԱՏ Գ. (287—337). — Հռոմի և Պարսկաստանի նամաձայնութենէն յետոյ Դիոկղետիանոս կայսրը հանդիսաւոր կերպով թագաւոր պսակելով Տրդատը զօրքով Հայաստան զրկեց ուր ան մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ քուրմերու, նախարարներու և ժողովրդեան կողմէ: Պարսից Վուամ Բ. թագաւորն ալ ճանչցաւ անոր թագաւորութիւնը: Տրդատ բարեկամ մնալով Հռոմի, Հայաստանի հիւսիսային ազգերը եւս իրեն հետ ունեցաւ և իր երկրէն վտարեց Պարսիկները:

ՆԵՐՍԷՆ ԵՒ ՄԾԲԻՆԻ ԴԱՇԻՆՔԸ. — Հայաստանի խաղաղութիւնը նորէն վրդովուեցաւ, սակայն, Պարսից Ներսէն թագաւորին ժամանակ որ տիրեց Հայաստանի և Դիոկղետիանոս կայսրը ստիպուեցաւ նոր պատերազմի ձեռնարկել, սակայն չարաչար պարտուեցաւ: Երկրորդ մեծ պատերազմի մը մէջ, որուն մասնակցեցաւ նաեւ Տրդատ, Պարսից բանակը խորտակուեցաւ և յաղթողներուն ձեռքը ինկան արքայից արքային կանանցը, քոյրերը, նախարարները և գանձերը: Մծբինի մէջ կնքուեցաւ խաղաղութեան դաշինք մը որ 40 տարուան խաղաղութիւն պարգեւեց Հայաստանի:

ՔՐԻՍՏՈՆԷՆՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ. — Խաղաղութեան այս երկարատեւ շրջանին կարեւոր դէպք

մը կերպարանափոխեց Հայաստանը և բացաւ բոլորովին նոր շրջան մը մեր պատմութեան մէջ: — Հայաստան ընդունեց Քրիստոնէութիւնը 305 թուականին: Կարժէ գիտնալ թէ Հռոմի մէջ քրիստոնէութիւնը տարածուեցաւ 392 թուին:

Քրիստոնէութեան մուտքը Հայաստան կապուած է հրաշքի մը հետ: Այդ հրաշքը հետեւեալն է. — Երիզայի մէջ Անահիտ մայր դիցունիին նուիրուած մեծ հանդիսութեան մը, Գրիգոր, որ արքայասպան Անակի որդին էր և քրիստոնեայ, կը մերժէ իր մասնակցութիւնը: Ասոր համար, իբր պատիժ, կը նետուի Արտաշատի խորվիքապը, ուր կը մնայ 15 տարի: Յետոյ տեղի կ'ունենայ Հախիսիմեան կոյսերու կոտորածը, որմէ յետոյ, Տրդատ կը հիւանդանայ և կը բժշկուի Գրիգորի կողմէ: Տրդատ կ'ընդունի քրիստոնէութիւնը և Գրիգորի հետ նոր կրօնքը կը տարածէ Հայաստանի մէջ:

Ուրեմն, նոր կրօնքը Հայոց մէջ կը տարածուի թագաւորին հրամանովը: Սակայն պէտք է գիտնանք թէ քրիստոնէութիւնը արդէն մեծ թիւով հետեւորդներ ունէր մեր երկրին մէջ Թադէոս և Բարթողէմէոս առաքելակներու քարոզութեան շրջանին և ասոր համար է որ Հայաստանեայց եկեղեցին առաքելական է, ինչպէս է կաթոլիկ եկեղեցին:

ՊԱՅՔԱՐ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՐՕՆՔՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ. — Երբ հաւատացեալներու թիւը շատցաւ, հարկ տեսնուեցաւ պետ մը ունենալ: Ուստի Գրիգոր, 16 հայ նախարարներու հետ զրկուեցաւ կեսարիա ուր ան եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և յոյն կրօնականներու խումբի մը հետ վերադարձաւ Հայաստան, հետը բերելով նաեւ սուրբերու մատուցներ:

Ճամբու ընթացքին Գրիգոր հանդիպեցաւ Յաշտիշատ (Տարոնի մէջ) ուր կային Անահիտի, Ասողիկի և Վահագնի նշանաւոր մեհեանները. Գրիգոր կործանեց զանոնք և անոնց տեղ կանգնեց Հայաստանի սուղին Մայր Տաճարը և Կաթողիկոսարանը:

Նոր կրօնքին դէմ մեծ ըմբոստութիւն մը հանեցին քուրմերը, սակայն պարտուեցան և բնաջնջուեցան: Հին մեհեաններու կալուածները անցան եկեղեցիին, քուրմերու հարստութիւնն ալ՝ նոր կրօնքի պաշտօնեաներուն, որով, եկեղեցին ու եկեղեցականութիւնը հարստացան և մեծ ազդեցութիւն ձեռք բերին:

Գրիգորի վերադարձին լուրը առնելուն պէս, Տրդատ, իր ընտանիքով ու հայ մեծամեծներով անոր ընդառաջ եկաւ Բագաւան քաղաքը և հոն, Եփրատի մէջ, ան մկրտուեցաւ Հայոց սուղին հայրապետին ձեռքովը, բիւրաւոր ժողովրդեան հետ:

Կարճ ատենէն նոր կրօնքը այնքան սիրելի դարձաւ Հայոց որ, երբ Հոռմի Մաքսիմինոս Գայա կայսրը, 311ին, փորձեց հեթանոսութիւնը վերահաստատել Հայաստանի մէջ, Հայերը պատերազմի ելան և յաղթեցին այս նշանաւոր կայսրին:

Գրիգոր քրիստոնէութեան լոյսը մեր մէջ տարածած ըլլալուն համար կոչուեցաւ Լուսաւորիչ, իսկ Տրդատ դասուեցաւ սուրբերու կարգը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպէս տեղի ունեցաւ Տրդատ Գ.ի թագաւորութիւնը: Ի՞նչ բրաւ Պարսից Ներսէի թագաւորը եւ ի՞նչ հետեւանք ունեցաւ: Ի՞նչ պարագաներու տակ քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստանի մէջ: Ինչո՞ւ առաքելական կը նկատուի մեր եկեղեցին: Ո՞վ եղաւ Հայոց առաջին կրօնապետը: Ի՞նչ բրին հին կրօնքին պաշտօնեաները եւ ի՞նչ եղաւ հետեւանքը: Ի՞նչ փորձեց ընել Մաքսիմինոս Գայա կայսրը եւ ի՞նչ արդիւնք ձեռք բերաւ:

### Դ Ա Ս Ժ Է .

## ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՕՆՔԸ



Ուրիշ ժողովուրդներու պէս հին Հայերն ալ նախապէս հեթանոս էին: Ունէին բազմաթիւ աստուածութիւններ, իրարմէ տարբեր կարողութիւններով, ոմանք առաջնակարգ, ոմանք երկրորդական: Այդ կարողութեան և կարեւորութեան համաձայն ալ կը տարբերէր այդ աստուածութիւններու պաշտամունքը: Հին Հայերը կը պաշտէին նաեւ ոգիներ և բնութեան տարբերը (ջուր, քամի, անտառ եւն. . .):

Առաջնակարգ աստուածներն էին.

1. Արամազդ, որ աստուածներու հայրն էր, այնքան ստեղծողը: Իր մեհեաներէն մէկը կը գտնուէր Անի ամրոցը՝ Եփրատ գետի վրայ:

2. Անահիթ դիցուհին, Արամազդի աղջիկը, որ կը կոչուէր նաեւ «Հայոց Տիկինը» և շատ կը յարգուէր: Անիկա ամէն լաւ բաներու մայրն էր, Հայաստանի փառքը և զայն պահպանողը: Իր մեհեանները կը գտնուէին Երիզա և Աշտիշատ:



Անահիթ

3. Վահագն, քաջութեան և պատերազմի աստուածը, որ նմանապէս շատ կը յարգուէր: Իր մեհեան դարձեալ կը գտնուէր Աշտիշատ: Այս քաղաքը հին Հայոց համար կարեւոր ուխտատեղի մը և սրբավայր մըն էր:

4. Ասղիկ, որ գեղեցկութեան և լոյսի աստուածուհին էր: Մեհեան՝ Աշտիշատ:

5. Միհր, Արամազդի որդին, կրակի աստուածն էր որուն մեհեան կը գտնուէր Դերջանի մէջ:

6. Ամանոր, այգեգործութեան աստուած, մեհեան Բագուանի մէջ:

Կային տակաւին ուրիշ աստուածութիւններ եւս, ինչպէս, Տրե, Բարջամ եւն.: Ոգիներէն յիշենք Բնգղաներ որոնք իբր թէ ջուրերու մէջ կ'ապրէին, Վիթապաներ, Առնակ կամ Կրոզ, Չարեեր, Այսեր եւն.: Հին Հայերը կը յարգէին նաեւ սօսի և բարդի ծառերը:

Հայաստանի արեւելեան, հարաւային և արեւմտեան մասերը ենթարկուած էին պարսկական, ասորական և յունական կրօններու ազդեցութեան, մասնաւոր պարսկականին:

Հին Պարսիկները զրադաշտական էին և իրենց կրօնքը հաստատուած էր բարի և չար աստուածութեանց գաղափարին վրայ: Ահուրա-Մազդան (Արամազդ) բարութեան, լոյսի աստուածն էր և աշխարհը ստեղծողը: Իսկ չարութեան և խաւարի աստուածն էր Ահրիմանը, որ կ'աշխատէր ոչնչացնել առաջինին բոլոր լաւ գործերը: Ըստ պարսկական կրօնին, մարդու պարտականութիւնն էր օգնել Ահուրա-Մազդային, յողթելու համար Ահրիմանին: Մարդս պէտք էր մշակէր հողը, ծառեր, այգիներ անկէր, օգտակար բոյսեր աճեցնէր, շինութիւններ շինէր և անոնց մէջ կրակը անշէջ պահէր: պէտք էր շտտցնէր անասունները, մաքուր պահէր հողն ու ջուրը և կրակը: Մարդս պէտք էր համոզուած ըլլար թէ, վերջ ի վերջոյ, լոյսը, բարին պիտի յողթանակեն և այն տան աշխարհի վրայ կը թագաւորէ անմահութիւնը:

Հին Հայերը կը հաւատային՝ թէ մեռնողները ոգիի փոխուելով կ'ապրէին շիրիմին մէջ և իրենց պաշտպանութեան տակ կ'առնէին ողջերը, որոնք պարտաւոր էին անոնց ուտելիք նուիրել, ծէսեր և զոհաբերութիւններ կատարել:

Ձոնը կը կատարուէր տաճարին առջեւ շինուած բազինին վրայ: Ամէն աստուած իրեն յատուկ զոնք կը պահանջէր. Արամազդը ցուլ, նոխազ, ձի, ջորի, թըրջուհուն կը պահանջէր, ամէնն ալ ճերմակ: Ասղիկը՝ վարդ, սուկեղէն, արծաթեղէն կ'ուզէր, Միհրը՝ ձի: Ձոներուն միսը քուրմերուն, աղքատներուն և պանդուխտներուն կուտային: Ամէն մարդ չէր կրնար զոն մատուցանել, այլ աստիճանաւորները:

Անահիտի տօնախմբութիւնը ամենէն փառաւորն էր, տեղի կ'ունենար նաւասարդ 15ին, որ Հայոց բարեկենդանն էր: Տեառնընդառաջն ալ մեր նախնեաց կրակապաշտութեան շարունակութիւնն է մեր մէջ մնացած:

Հեթանոսական կրօնը Հայաստանի մէջ տիրեց մինչեւ Դ. դարու սկիզբը, երբ, ինչպէս տեսնուք, Քրիստոնէութիւնը պետական կրօն դարձաւ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հայերը, նախապէս, ի՞նչ կրօնք ունէին: Որո՞նք էին Հայոց առաջնակարգ աստուածութիւնները եւ ի՞նչ գիտենք անոնցմէ իւրաքանչիւրի մասին: Ի՞նչ գիտէք զրադաշտական կրօնի մասին: Հեթանոսական կրօնը մինչեւ ե՞րբ շարունակուեցաւ Հայաստանի մէջ:



# ՀԱՅԱՍՏԱՆ ՏՐԴԱՏ Գ.ԷՆ ՅԵՏՈՅ

## ԴԱՍ ԺԸ.

### ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԵՒ ՏԻՐԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿԻ ՕՐՈՎ.— Ընդունելով քրիստոնէութիւնը, Հայաստան հեռացաւ Պարսկաստանէն և մօտեցաւ Հռոմին: Այս պատճառաւ Սասանեանները թշնամացան Հայոց հետ:

Այս առիթներ Պարսկաստանի թագաւորն էր Շապուհ Բ., որ իշխեց մօտ 70 տարի: 336ին, երբ 40-ամեայ դաշինքին պայմանաժամը լրացաւ, Շապուհ Բ. ձեռնարկեց նոր պատերազմի և գրաւեց Հայաստանի հարաւային մասերը: Այս կերպով առաջ եկան նոր պատերազմներ Հայաստանի և Միջագետքի տիրապետութեան համար, որոնք տեւեցին շատ երկար:

Հայաստանի տիրապետութեան համար Շապուհ նախ գրգռեց հայ պարսկասէր նախարարները խոսրովի դէմ: Այս նախարարները իրենց կալուածները ընդարձակելու նպատակաւ իրարու դէմ ալ պատերազմի մէջ էին և կ'աւերէին երկիրը: Թագաւորը երբ տեսաւ թէ չի կրնար հաշտեցնել, հրամայեց կոտորել անոնցմէ ամենէն կարեւորները.— Որդունեաց և Մանուղեանց նախարարութիւնները:

Շապուհի դրդումով Հայաստան արշաւեցին Մագքութները, բայց խոսրովի նշանաւոր սպարապետը՝

Վաչէ՛ յաջողեցաւ անոնց յաղթել ու գլխատել անոնց Սանէսան թագաւորը:

Շապուհ, անկէ վերջ, երկու անգամ ինք անձամբ եկաւ Հայաստան, սակայն ան հանդիպեցաւ Հայոց կորովի ընդդիմութեան:

Խոսրով կոտակ թէեւ իր հօր քաջութիւնը չունէր, սակայն հայրենասէր և շինարար արքայ մը եղաւ: Ան կը գնահատէր հաւատարիմ իշխաններու անձնուիրութիւնը:

Հակառակ պատերազմներուն և ներքին խռովութիւններուն, երկիրը հարուստ էր և Խոսրով կրցաւ շինել Դուին մայրաքաղաքը և անկէլ անտառներ:

ՏԻՐԱՆ.— Խոսրով կոտակի յաջողեց իր որդին Տիրան (342—350), որուն օրով ներքին խռովութիւնները աւելի սաստկացան և Տիրան աշխատեցաւ զսպել անհանդարտ նախարարները: Տիրանի գործակից և խորհրդատուն էր Հայր Մարդպետ նշանաւոր նախարարը: Մարդպետական նախարարները մեծ ազդեցութիւն ունէին երկրին մէջ և կ'աշխատէին զօրացնել թագաւորին դիրքը: Անոնք ամենամեծութեան կերպով կը պատժէին ապստամբ նախարարները և անոնց ստացուածքը յարքունիս կը գրաւէին: Հայր Մարդպետը կոտորել տուաւ Արծրունեաց, Ռշտունեաց և Կամսարական նշանաւոր տոհմերը և այս պատճառաւ ալ ժողովուրդը իրմէ զգուցաւ: Տիրանի հակառակ էին նաեւ եկեղեցականները, որոնք հռոմէասէր նախարարներու հետ էին: Եկեղեցական իշխանութեան և թագաւորին միջեւ հակառակութիւնը այն աստիճան սաստկացաւ որ Տիրան ձեծի տակ մեռցնել տուաւ Յուսիկ կաթողիկոսը, Լուսաւորիչի թոռը:

Տիրանի օրով նորէն պատերազմներ տեղի ունե-  
նան Պարսկաստանի և Հռոմայեցւոց միջեւ Միջագետ-  
քի և Հայաստանի տիրապետութեան համար և Տիրան  
օգնեց Հռոմայեցւոց: Պատերազմը վերջացաւ Պարսից  
պարտութեամբը:

Տիրանի նպատակն էր, կայսեր օգնութեամբ,  
դարձեալ Պարթեւ Արշակունիները բարձրացնել Պարս-  
կաստանի գահուն վրայ: Փիասկ Սիւնի հայ իշխանը,  
որ Տիրանի սենեկապետն էր և կ'ատէր իր թագաւորը,  
մատնեց Տիրանը և Շապուհ նենգութեամբ զայն ձեր-  
բակալելով զրկեց աչքի լոյսէ:

Արքայից արքային այս արարքը խիստ զայրացուց  
Հայերը, որոնք կոստանդիանոսի օգնութեան դիմեցին:  
Կայսրը մեծ բանակ մը զրկեց Հայաստան որ Հայոց  
օգնութեամբը պարտութեան մատնեց Պարսիկները:  
Շապուհ ստիպուեցաւ խաղաղութեան դաշինք կապել  
կայսեր հետ և Հայերն ալ սիրաշահելու համար թա-  
գաւոր նշանակեց Տիրանի որդին Արշակը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ վիճակի մէջ էր Հայաստանը Խոսրով  
Կոստակի օրով, ի՞նչ կարելու դէպքեր տեղի ունեցան իր սանը  
եւ ի՞նչ պատճառներով: Ո՞վ յաջորդեց Խոսրովին եւ ի՞նչ ուզեց  
ընել ան: Ի՞նչ եղաւ հետեւանքը. ի՞նչպէս վերջացաւ Տիրանի  
թագաւորութիւնը:



# ԵՐԵՄԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Դ Ա Ս Ժ Թ .

ԱՐՇԱԿ Բ .



ԵՐԵՄԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌԸ.— 355էն  
385 թուականներուն Հայաստան թատր եղաւ նոր պա-  
տերազմներու: Այդ պատերազմները եղան մեր Արշակ  
Բ., Պապ, Վարազդատ թագաւորներու և Մանուէլ Մա-  
միկոնեանի իշխանապետութեան շրջանին:

Այդ երկարատեւ կռիւներուն պատճառը Պարս-  
կաստանի և Հռոմի աշխարհակալական փափաքն էր,  
ուրիշ խօսքով Հայաստանի և Միջագետքի տիրապե-  
տութեան խնդիրը:

Երկու կէտ հիմովուրէ միաքերնիս պահենք.—

Ա. Այս կռիւներու ընթացքին Հռոմայեցիք կամաց  
կամաց կը լքեն Հայերը՝ իրենց դաշնակիցները:

Բ. Այս տոհմ երեւան կուգան ուրացողներ, որոնք  
Պարսից հետ կը միանան, համոզուած ըլլալով թէ այդ  
կերպով կրնան փրկել հայրենիքը կորուստէ:

Այս պատերազմներուն սկիզբը Հայերը և Հռոմայե-  
ցիք դաշնակից էին իրարու, սակայն երբ վերջինները  
լքեցին Հայերը, կռիւները մղուեցան Հայոց և Պարսից  
միջեւ միայն: Հայոց կ'օգնէին, երբեմն, իրենց դրացի-  
ները:

Երեսնամեայ պատերազմները վերջացան անով, որ Քիւզանդիոն եւ Պարսկաստան, ի վերջոյ, իրարու հետ հաւատեցան եւ մեր երկիրը բաժնեցին իրենց միջեւ:

**ԱՐՇԱԿ Բ.** — Արշակ Բ. մեր թագաւորներու մէջ կարեւոր տեղ մը կը գրաւէ: Երիտասարդ էր երբ գահ բարձրացաւ եւ մեծ ջանք ի գործ դրաւ զօրացնելու Հայաստանը, սանձելով խռովարար եւ անհնազանդ նախարարները: Իսկ այս նպատակին հասնելու համար ան դիմեց շատ խիստ եւ անգուժ միջոցներու, որոնք իր անկումը առաջ բերին:

Իր թագաւորութեան սկիզբները խաղաղ անցան, եւ Արշակ, օգտուելով առիթէն, երկիրը զօրացնելու, հարստացնելու աշխատելով մէկտեղ, ջանաց սիրելի ըլլալ ժողովուրդին եւ Տիրանի ժամանակ գժտած նախարարները սիրաշահել: Մամիկոնեան նախարարները ազգէն շատ սիրուած ըլլալով, կարեւոր պաշտօններու հասցուց, եւ Ս. Ներսէս Պարթեւը, այն ատենուան ամենէն զարգացած մարդը՝ Լուսաւորչի ցեղէն, կաթողիկոս նշանակեց:

Ներքին այս բարեկարգութիւններէն յետոյ, Արշակ երկրին սահմաններն ալ ամրացուց, եւ ժողովուրդը խաղաղութեան ու ապահովութեան մէջ նոր շունչ մը առաւ:

Թէեւ մօտ 50 տարի էր որ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեր էր, սակայն ան դեռ Հայաստանի ամէն կողմերը չէր տարածուած: Քրիստոնէութիւնը տարածելու եւ եկեղեցիին ազդեցութիւնը զօրացնելու նպատակաւ, այս խաղաղութեան շրջանին, Մեծն Ներսէս, երկրին ամէն կողմերը բացաւ հիւանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ, եկեղեցի-

ներ ու վանքեր եւ այս վերջիններուն կից՝ դպրանոցներ:

**ԱՐՇԱԿ Ա. Ի ԱՆԸ.** — Իր ձեռքին տակ հաւատարիմ եւ զօրաւոր բանակ մը ունենալու նպատակաւ, Արշակ, Մասիսի ստորոտը շինեց նոր քաղաք մը, զոր, իր անունովը կոչեց Արշակաւան, որ սրբալուստեան հրամանով լեցուեցաւ ամէն տեսակ չարագործներով որոնց յանցանքները կը ներուէին: Ասանցմէ էր որ թագաւորը պիտի կազմէր իր փափաքած բանակը: Արշակի այս ձեռնարկը, սակայն, երկրին մէջ առաջ բերաւ տակնուվրայութիւն մը եւ չարագործներու թիւը շատցաւ: Նախարարները նախ բողոքեցին Արշակի, որուն զօրացումին շատ փափաքող չէին, եւ երբ տեսան թէ թագաւորը կարեւորութիւն չի տար իրենց, միացան եւ Ներսէս կամսարականի առաջնորդութեամբ գացին կործանեցին նորաչէն քաղաքը: Արշակ, պարտուած, փախաւ Վրաստան եւ օգնական զօրք ստանալով վերադարձաւ ու ճնշեց ապստամբութիւնը, անխնայ ջարդելով բոլոր ըմբոստները:

**ԱՐՇԱԿ ԿԸ ԳԺՏԻ ՆԱԽԱՐԱՐԱՍՅ ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԵՏ.** — Այսպէս, Արշակ, նպատակ դրած ըլլալով ճնշել նախարարները, հետզհետէ աւելի անգուժ ու բռնաւոր դարձաւ եւ մահուամբ պատժեց նոյնիսկ անոնք որոնց մասին միայն կասկած ունէր: Այսպէս, սպաննեց իր երկու եղբորորդիները՝ Գնէլ եւ Տիրէթ, սպաննեց նաեւ Վարդան Մամիկոնեանը եւ ուրիշներ: Իրեն խորհրդական ունենալով Հայր Մարգարէտը՝ Արշակի այս աններելի անգթութեանց պատճառաւ Մեծն Ներսէս եւս զայրանալով՝ գժտեցաւ եւ հեռացաւ թագաւորէն:



Արշակ, խոհեմութեամբ, լաւ յարաբերութիւն պահեց Քիւղանդիոնի հետ սակայն, և կայսերական տունէն օրիորդի մը հետ ամուսնացաւ: Շապուհ Բ. Արշակը իր կողմը շահելու նպատակաւ Պարսկաստան կանչեց ու համոզեց և Աւետարանի վրայ երգում ընել տուաւ որ իրեն հաւատարիմ պիտի մնայ:

Թէ Շապուհ ինչքան պէտք ունէր հայոց թագաւորին բարեկամութեանը, ցոյց կուտայ հետեւեալ դէպքը: Երբ անգամ մը, Արշակ կը պտտէր արքունի ախոռներուն բաժինին մէջ, Շապուհի ախոռապետը, խօսքը իրեն ուղղելով, ըսաւ. «Այժերու թողաւոր, եկուր այս խոտի խուրձին վրայ նստէ»: Վասակ սպարապետը, որ կ'ընկերանար Արշակին, զայրացած այս նախատալից խօսքին վրայ, քաշեց սուրը և կտրեց ախոռապետին գլուխը: Շապուհ, փոխանակ զայրանալու, գովեց Վասակի տիրասիրութիւնը և պատուեց զայն:

Բայց, 355 թուականին, Արշակ երբ իմացաւ թէ Պարսից պալատին մէջ իրեն դէմ դաւադրութիւն կը լարուի, բոլորովին Հռոմայեցւոց կողմը բռնեց: Այս թուականին ալ կ'սխիւն երեսնամեայ պատերազմները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Մեր ո՞ր թագաւորներուն օրովը մղուեցան երեսնամեայ պատերազմները և ի՞նչ էր ատոնց պատճառը: Ի՞նչ նոր երեւոյթներ առաջ եկան այդ պատերազմներու ընթացքին: Ի՞նչպէս վերջացան անոնք: Ի՞նչպիսի թագաւոր մը եղաւ Արշակ Բ. և ներքին ի՞նչ կարգադրութիւններ ըրաւ: Ինչո՞ւ շինուեցաւ Արշակաւան քաղաքը և ի՞նչ բաներու պատճառ եղաւ: Ինչո՞ւ Արշակ գժտեցաւ նախարարներու և Մեծն Ներսէսի հետ: Ի՞նչպէս էր Արշակի արտաքին քաղաքականութիւնը:




# ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

(ՇԱՐ.)

**Դ Ա Ս Ի.**

## ԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

### ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ



ՀՌՈՄԷԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ.—

Շապուհ Բ. իր երկրին արեւելեան կողմերը պատերազմները վերջացնելէ յետոյ թշնամացաւ Հռոմի դէմ և պահանջեց Կոստանդիանոս կայսրէն որ իրեն թողու Հայաստանն ու Միջագետքը: Եւ օրովհետեւ կայսրը մերժեց այդ պահանջը, Շապուհ 300,000 զօրքով եկաւ պաշարեց Ամիդ (Տիգրանակերտ) քաղաքը (359) և զայն գրաւելով հիմնայատակ կործանեց: Յաջորդ տարի կայսրը եկաւ Պարսից վրայ: Կեսարիոյ մէջ ան սեսակցեցաւ Արշակի հետ, որուն մեծ պատիւներ ըրաւ, և հաւատարմութեան խոստում առնելով անկէ, նուէրներով և մեծ խոստումներով ետ դրկեց: Սակայն Կոստանդիանոս յաջողութիւն չգտաւ: Բիչ յետոյ ան մեռաւ և իրեն յաջորդեց Յուլիանոս:

Նոր կայսրը, որ ուրացող կոչուեցաւ քրիստոնէութիւնը հալածելուն պատճառաւ, Կոստանդիանոսի վրէժը լուծելու համար Պարսիկներէն՝ արեւելք եկաւ: Արեւելեան ժողովուրդները ուզեցին օգնել իրեն, բայց կայսրը գոռողութեամբ մերժեց: Միայն պատուիրեց Արշակ Բ.ին որ պատրաստ ըլլայ և իր հրամանին սպասէ: Կայսրը իր բանակով հասաւ Տիգրանի առջեւ: Արշակ և

հռոմէական ուրիշ բանակ մը հոն պիտի գային իրեն միանալու, բայց չկրցան, որովհետեւ պարսիկ զօրքը ճամբան կտրած էր Հռոմայեցիք յաղթուեցան և Յուլիանոս սպաննուեցաւ:

**ՏՈՒՐԱՅԻ ԴԱՇԻՆԻՔ.**— Բանակին կողմէ կայսր ընտրուեցաւ Յովիանոս, որ չհամարձակելով պատերազմը շարունակել, հաշտուեցաւ Պարսից հետ, անոնց ձգելով Միջագետքի մեծ մասը և Հայաստանը: Ասոր համար ալ սակայն ան դաւով սպաննուեցաւ և իրեն յաջորդեց Վաղենդիանոս, որ իր Վաղէս եղբայրը իրեն գահակից ընտրեց և իրեն պահելով արեւմուտքը, արեւելքը, Պոլիս մայրաքաղաքով եղբորը յանձնեց: Կայսրութիւնը երկուքի բաժնուելով պետութիւնը վերակազմուեցաւ:

Տուրայի դաշինքը, ուրեմն, աննպաստ էր Հայաստանի համար: Իսկ ամենէն գէշը այն էր, որ այդ ատեններ, նախարարներէն ոմանք գժտած էին Արշակի հետ. ատոնք էին Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան, որոնք Շապուհի կողմը անցած էին, իրենց կրօնքը ուրացած, ու Շապուհ առաջինին խոստացած էր Հայաստանի թագը, իսկ երկրորդին կնութեան տուած էր իր քոյրը:

Իսաւճան և ուրացող այս երկու նախարարները, պարսկական բանակով մտան Հայաստանի հարաւային և արեւմտեան գաւառները և անլուր անգթութիւններ գործեցին: Իսկ արեւելեան կողմէն Շապուհ ինքը սկսաւ արշաւանքներ կատարել, սակայն Արշակ, իր քաջ ըսպարապետ Վասակի հետ միշտ յաղթական դուրս եկաւ: Հայոց կ'օգնէին հիւսիսի դաշնակիցները:

Սակայն Հայաստանի սահմանագլուխի մեծ նախարարները միշտ Արշակի հաւատարիմ չմնացին ու կա-

շտուեցան Շապուհէն: Ա. Ներսէսի խրատներն իսկ անօգուտ անցան:

**ԱՐՇԱԿԻ ՎԱՍՃԱՆՔ.**— Հակառակ ասոր, սակայն, Շապուհ չկրցաւ խոնարհեցնել Արշակը և խարդախութեան դիմեց անկէ ազատուելու համար: Պարսից ամենամեծ երգումովը զայն իր քով կանչեց հաշտուելու համար: Արշակ գնաց իր սպարապետին հետ, և պարսից նենգ թագաւորը ճաշի ատեն զայն ձերբակալեց, ոսկի շղթայով կապեց և աչքը կուրցնելով Անյուշ բերդին մէջ բանտարկեց 367ին:

Ան մորթագերծ ըրաւ Արշակի անվհեր ըսպարապետը՝ Վասակ, որուն մորթին մէջ յարդ լեցնելով բերդին մէջ կախեց:

Իսկ Արշակ տարիներով բանտարկուած մնաց և անձնապասն եղաւ հետեւեալ կերպով: Դրաստամատ ատենով հայ իշխան մը որ Շապուհի բանակին մէջ էր և պատերազմի մը ատեն արքայից արքային կեանքը ազատած, հրաման ստացած էր ուղածը խնդրելու: Դրաստամատ խնդրեց որ արածուելի Արշակը տեսնելու: Հրամանը ստանալով ան բերդը գնաց նուէրներով և ճաշի սեղանի մը շուրջ զուարթացուց իր տէրը: Ճաշէն վերջ, հայ դժբախտ թագաւորը վերյիշելով իր հին օրերը, կսկիծէն, պտուղի դանակովը ինքզինքը սպաննեց: Այս տեսնելով Դրաստամատը, նոյն դանակովը, ինքն ալ անձնապասն եղաւ և իր թագաւորին քովը ինկաւ:

**ՀԱՐՅՈՒՄԵՆԻ.**— Ի՞նչպէս սկսան Հռոմէա-պարսկական նոր պատերազմները եւ ի՞նչ շրջաններէ անցան: Ի՞նչ էր Տուրայի դաշինքը եւ ի՞նչ հետեւեալ ունեցաւ ան Հայաստանի համար: Որո՞նք էին հայ ուրացող նախարարները եւ ի՞նչ ըրին: Ի՞նչպէս վերջացաւ Արշակի թագաւորութիւնը:

# ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

(ՇԱՐ.)

**Դ Ա Ս Ի Ա .**

**Պ Ա Պ**

ՓԱՌԱՆՁԵՄ ԹԱԳՈՒՀԻՆ.— Արշակ Բ.ի միակ որդին՝ Պապ՝ դեռ անչափահաս էր, ուստի կառավարութեան ղեկը ձեռք առաւ Փառանձեմ թագուհին:

Փառանձեմ Սիւնեաց Անդովկ իշխանին աղջիկն էր: Անդովկ իշխանը Արշակ Բ.ի կուսակիցներէն էր. իր աղջիկը նախ ամուսնացած էր Արշակի եղբորորդւոյն՝ Գնէլի հետ: Այս վերջինին սպանութենէն յետոյ, Փառանձեմ, իր գեղեցկութեան և խորամանկութեանը շնորհիւ յաջողեցաւ Հայոց թագուհին ըլլալ: Արշակի ձերբակալութենէն յետոյ Փառանձեմ ձեռք առաւ երկրին պաշտպանութեան գործը և իր անձին օրինակովը քաջալերեց թուլասիրտները: Թագուհին ամրացաւ Արտագերս բերդը:

Պարսից կողմ անցած երկու ուրիշ հայ իշխաններ, Կիւլսկ և Արտաւան անունով, պարսիկ զօրքով եկան պաշարեցին Արտագերսը, Փառանձեմը և Պապը ձերբակալելու համար: Անոնք երբ տեսան թէ զէնքի ուժով պիտի չկրնան իրենց նպատակին հասնիլ, թագուհիին արածութեամբը ներս մտան հաշտութեան մասին խօսելու, սակայն հրապուրուած Փառանձեմի խելքէն, ճարտար լեզուէն, անոր կողմը անցան և

բերդապահներու հետ, երբ պարսիկ բանակը խոր քունի մէջ էր, թշնամիին վրայ յարձակեցան ու ջարդեցին: Այս կռիւէն քիչ առաջ, թագուհին կրցած էր Հայոց արքայորդին փախցնել Հռոմայեցւոց կողմը:

Այս յաջողութենէն յետոյ, Պոլիս գտնուող հայ նախարարներու խնդրանքովը, Վաղէս կայսրը, խախտելով Տուրայի դաշինքը, միջամտեց Հայաստանի գործերուն և հռոմէական բանակին օժանդակութեամբը Պապին յանձնեց Հայոց թագը 368ին:

Սակայն շուտով Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան պարսիկ զօրքերով եկան պաշարեցին Արտագերսը, որ դիմադրեց տասնևչորս ամիս և սովէն ու ժանտախտէն տկարացած՝ անձնատուր եղաւ: Ինն օր և ինը գիշեր իր գանձերը կողոպտուեցան և Հայոց կարիճ թագուհին գերի տարուեցաւ և չարչարանքով սպաննուեցաւ: Երկու ուրացող իշխանները գրաւեցին նաեւ Հայաստանի քանի՛մըն շինուոր քաղաքները և բնակիչները, մանուսնդ վաճառականները, քչեցին Պարսկաստանը, Անոնք, նաեւ, փակեցին շատ մը դպրոցներ, այրեցին սուրբ գիրքերը և եկեղեցականները զրկեցին Պարսկաստան: Աշխատեցան ամէն կերպով Հայաստանը ենթարկել պարսկական տիրապետութեան: Շապուհ ինքն ալ Հայաստան գալով չլսուած վայրագութիւններ գործեց, գերիները տանջանքով սպաննեց և նախարարներու կիները բերդերէն կախել տուաւ:

Այս դէպքերուն վրայ, Հայերը, վրէժխնդրութեամբ լեցուած, Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ, մեծ յողթանակ մը տարին Շապուհի վրայ որ փախաւ, Հայոց ձեռքը ձգելով իր կանանոցը, 600 մեծամեծներու հետ:

Աւելի մեծ պատերազմ մը եղաւ Ձիրաւ դաշտին

մէջ, նպատ լերան ստորոտը հայ-հռոմէական միացեալ բանակներու և Պարսից միջև և վերջնացաւ Շապուհի պարտութեամբը:

**ՊԱՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.** — Վերջնականապէս հաստատուելով Հայոց գահուն վրայ, Պապ ձեռնարկեց ներքին բարենորոգումներու Զօրացուց բանակը և Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ իրեն ենթարկեց սահմանազլխային ապստամբ նախարարութիւնները: Յետոյ, իր հօրը պէս, չուզելով ենթարկուիլ ոչ Հռոմայեցուց և ոչ ալ Պարսից, աշխատեցաւ ան, ախ ըլլալ: Մէկ կողմէն պատժեց պարսկասէր նախարարները, իսկ միւս կողմէ հակառակեցաւ Ս. Ներսէսին, պակսեցնելով վանքերուն թիւը, ցըրելով միաբանութիւնները և կուսանոցները և գրուելով կալուածները եկեղեցիներուն ու վանքերուն որոնք շատ հարստացեր և մեծ ազդեցութիւն ձեռք բերեր էին:

Այս ատենները յանկարծ մեռաւ Ս. Ներսէսը և այն ապաւորութիւնը առաջ եկաւ ժողովրդեան մէջ թէ Պապը զայն թունաւորեց: Ժողովուրդը պաղեցաւ իր թագաւորէն:

Ուզելով հայոց եկեղեցին եւս ազատել յունական ազդեցութենէն, Պապ, չձգեց որ Ներսէսի յաջորդը՝ Յուսիկ՝ Կեսարիա երթայ կաթողիկոս ձեռնադրուելու համար և այդ օրէն ի վեր հայ եկեղեցին դարձաւ անկախ:

Այս կարգադրութիւնները սակայն հաճոյ չէին յունասէրներուն, որոնք ամբաստանեցին Պապը Վաղէսի սուջեւ և սա հրամայեց Պապին իրեն ներկայանալ Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ:

Պապ առանց կասկածելու Կիլիկիա գնաց, բայց առանց կայսեր երեսը տեսնելու, շքախումբի մը հսկողութեան տակ, հոն մնաց բաւական ժամանակ: Թագաւորը հասկցաւ թէ թակարդը ինկած է ու ձեռնարկեց փախուստի: Իր 300 ձիաւորներովը, օր ցորեկով և պահապաններու շղթան կտրելով, յանկարծ դուրս ելաւ քաղաքէն և Հայաստանի ճամբան ձեռք առաւ: Լեզէոն մը զինուորներ իր ետեւէն հասան զինքը ետ դարձնելու համար, սակայն Հայոց նետերէն զարնուրած ետ դարձան: Երկու օր, երկու գիշեր ձիերը վազցնելով Պապ հասաւ Արամանի որմէ դժուարութեամբ անցաւ Կայսրը նոր խումբ մըն ալ զրկեց իր ետեւէն որ փախչողներու ճամբան կտրեց, սակայն Պապ Հռոմայեցիները շուարեցնելով ազատուեցաւ ու հասաւ Հայաստան ուր ընդունուեցաւ խանդավառութեամբ:

Պապ ասկէ յետոյ ալ շարունակեց բարեկամ մնալ Հռոմայեցիներու հետ, սակայն այն զօրապետները որոնք չէին կրցած զինքը բռնել և սմօթով էին մնացած, համոզեցին աւելորդապաշտ կայսրը թէ Պապը կախարդ մըն է և դեւերով լեցուն (այս համբաւը ու կախարդ մըն է և դեւերով լեցուն (այս համբաւը ու կախարդ մըն է և Յունաց մէջ ալ), իսկ միւս կողմէ, նէր Պապը Հայոց և Յունաց մէջ ալ), իսկ միւս կողմէ, Վաղէս կասկածելով թէ ան կրնայ հիմա Պարսից կողմը անցնիլ, սրտէն զայն ոչնչացնել:

Այս պաշտօնը յանձնուեցաւ Հայաստանի պահակազօրքին հրամանատար՝ Տերենտիոսին որ խնջոյքի մը ատեն սպաննել տուաւ Պապը:


**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Ո՞վ էր ժառանգմը եւ ի՞նչ գիտէր իր մասին. պատմիկ Արտագերոսի կռիւները եւ Մերութան Արծրունիի ու Վահան Մամիկոնեանի արարքները: Այդ արարքներուն հետեւանքով ի՞նչ դէպքեր պատահեցան: Ներքին ի՞նչ կարգադրութիւններ բրաւ Պապ, ի՞նչ նպատակով եւ ի՞նչ եղաւ հետեւանքը: Հայ եկեղեցին ի՞նչպէս անկախ դարձաւ եւ ի՞նչպէս մեռաւ Պապը:

# ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

(ՇԱՐ.)

**Դ Ա Ս Ի Ռ .**

**Վ Ա Ր Ա Չ Դ Ա Տ**



ՎԱՐԱԶԴԱՏ ԵՒ ՇԱՊՈՒՀԻ ԱՌԱՋՍՐԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԺՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.— Պապի մահը խիստ զայրացուց հայ մեծամեծները, որոնք, Մուշեղ Մամիկոնեանի նախագահութեամբ ժողով մը գումարելով, մըտածեցին ապստամբիլ կայսրէն: Բայց որովհետեւ ատիկա վտանգաւոր պիտի ըլլար, դարձեալ բարեկամութիւնը շարունակեցին Հռոմայեցւոց հետ:

Կայսրը Հայոց թագաւոր զրկեց Վարազդատը, որ ծագումով Արշակունի էր, և իր քաջութիւններովը մեծ անուն մը վաստակած Հռոմայեցւոց մէջ:

Սակայն նոր թագաւորը շատ անփորձ մէկն էր և այս խառնակ ժամանակներու մէջ երկիրը կառավարելու յարմարութիւնը չունէր:

Բարեբախտաբար կար Մուշեղ Մամիկոնեանը որ կը հսկէր Վարազդատի վրայ:

Սակայն Շապուհ անհանգիստ էր տեսնելով որ Հայաստանի մէջ Հռոմայեցւոց ազդեցութիւնը կը մեծնայ, ուստի առաջարկեց Վաղէս կայսրին բաժնել Հայաստանը իրենց միջեւ և այլեւս կռիւի պատճառ չունենալ: Կայսրը մերժեց այդ անիրաւ առաջարկը, բայց

միեւնոյն ատեն Հայաստանէն իր բանակները քաշեց Թրակիոյ մէջ պատերազմ ունենալով բարբարոսներու դէմ ուր ինքն ալ մեռաւ:

**ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՒ ՄԱՀԸ.—**

Հայոց սպարապետը Հայաստանը վերջնականապէս Պարսիկներէն ազատելու նպատակաւ Փոքր Թէոդոս կայսրին առաջարկեց մեր երկրին մէջ կառուցանել նոր բերդաքաղաքներ և սահմաններու վրայ ալ բերդեր, ու զանոնք լեցնել հայ և հռոմայեցի զինուորներով: Հռոմայեցիք ուշ հասկցան այս ծրագրին կարեւորութիւնը և օգտակարութիւնը իրենց և Հայերու համար, և այս ատենն է որ շինուեցաւ Թէոդոսուպոլիս կամ Կարին քաղաքը:

Սակայն Մուշեղ Մամիկոնեանի հայրենասիրութիւնն ու եռանդուն գործունէութիւնը իր մահուան պատճառ եղան: Բառ Սահառունի իշխանը, որ Վարազդատի դաստիարակը եղած էր, նախանձելով Մուշեղին, թագաւորին քով զայն ամբաստանեց իբրեւ գործակից Պապի դաւաճաններուն: Անհեռատես Վարազդատ հաւատարմով այս զրպարտութեան, ճաշի հըրաւերեց Մուշեղը և դաւով սպաննեց Հայոց քաջ ըսպարապետը:

**ՄԱՆՈՒԷԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ.—** Մուշեղի մահը ներքին խռովութիւններու պատճառ եղաւ: Մամիկոնեան

նախորարները, որ մինչեւ հիմա Հռոմայեցիներու հետ էին, պարսկասէրներու հետ եղան: Մուշեղի վրէժը առնելու նպատակաւ: Իրենց պետը եղաւ Մանուէլ Մանիկոնեան, որ մեր պատմութեան մէջ նշանաւոր դէմք մըն է: Իր քաջութեամբը, խելքովը և հայրենասիրու-

թեամբը՝ Ան ինքզինքը սպարապետ յայտարարեց և պահանջեց Վարազդատէն որ հեռանայ Հայաստանէն։ Կարնոյ դաշտին մէջ Վարազդատ և Մանուէլ բուռն պատերազմ մը ունեցան, ուր երկու կողմէն նշանաւոր մարդիկ մեռան, և Վարազդատ պարտուելով հեռացաւ Հայաստանէն (377)։

**ՄԱՆՈՒԷԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ.**— Այս յաղթանակէն յետոյ Մանուէլ եղաւ իշխանապետ և եօթը տարի խաղաղութեան մէջ պահեց երկիրը։ Ս. Ներսէսի բարեգործական հաստատութիւնները վերաբացաւ, նախարարներու միջեւ համերաշխութիւն հաստատեց, Պապի կինը՝ Զարմանդուխտ՝ թագուհի և ինքզինքը անոր երկու անչափահաս զուակներուն՝ Արշակի և Վաղարշակի՝ խնամակալ յայտարարեց։ Յետոյ բարեկամացաւ արքայից արքային հետ, որ, իբր գոհունակութեան նշան, Զարմանդուխտի և երկու արքայորդիներուն թագեր, իսկ Մանուէլի ալ թագաւորական հագուստ և ուրիշ նուէրներ զրկեց Սուրէն իշխանին հետ։ Սա 10,000 զօրքով Հայաստան պիտի մտար պաշտպաներու համար Մանուէլը։

Բայց նենգամիտ Մերուժան Արծրունին, կրցաւ թշնամութիւն ձգել Մանուէլի և Սուրէնի միջեւ, և իշխանապետը Հայաստանէն հալածեց պարսիկ զօրավարը ու յաղթեց իր վրայ եկող պարսիկ երեք բանակներու։ Յետոյ, Մերուժան ինքը եկաւ Մանուէլի դէմ, բայց պատերազմի մէջ սպաննուեցաւ։ Այս կերպով ալ վերջացան Երեսնամեայ պատերազմները։

Մանուէլ Արշակը թագաւոր և եղբայրն ալ անոր երկրորդը նշանակելէ յետոյ, Հայաստանը դրաւ կայսեր պաշտպանութեան տակ և մեռաւ շրջապատուած

հայ մեծամեծներէն, ցաւելով որ պատերազմի դաշտին վրայ չէր գտած իր մահը։

**ՀԱՐՑՈՒՄԵՆԻ.**— Ի՞նչ պարագաներու մէջ Վարազդատ թագաւոր եղաւ։ Ի՞նչ խորհեցաւ ընել Շապուհ Բ.։ Ի՞նչ էր Մուշեղ Մամիկոնեանի ծրագիրը և ի՞նչ եղաւ հետեւանքը։ Ո՞վ էր Մանուէլ Մամիկոնեանը և ի՞նչ բրաւ։ Ի՞նչպէս վերջացան Երեսնամեայ պատերազմները։



Շապուհ Բ.

# ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Դ Ա Ս Ի Գ .

ԱՐՇԱԿ Գ. ԵՒ ԽՈՍՐՈՎ Գ.



ԱՐՇԱԿ Գ. ԵՒ ԽՈՍՐՈՎ Գ. — Այս շրջանի թագաւորները շատ տկար եղան, Երեսնամեայ պատերազմները քայքայած ըլլալով Հայաստանը, որ ուժասպառ և յոգնած էր :

Վաղարշակ շուտ մեռաւ և Արշակ Գ. մինակ թագաւորեց : Այս տան Պարսից թագաւորն էր Շապուհ Գ., որ պարսկաւէր հայ նախարարներու փափաքին համաձայն Հայաստանի վրայ թագաւոր նշանակեց Խոսրով Արշակունին, անոր կին տալով իր քոյրը և բանակ մը երկրին պաշտպանութեան համար : Այս պատճառաւ Արշակ Գ. ստիպուեցաւ, իրեն հաւատարիմ մաս մը նախարարներով, անցնել այն մասը որ Յունաց ազդեցութեան շրջանակը կը համարուէր :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ. — Այս կերպով Հայաստան բաժնուեցաւ երկու մասի : Ասկէ յետոյ Շապուհ Գ. և Թէոդոս Ա. կայսրը զաշինք մըն ալ ստորագրեցին մեր երկիրը բաժնելով իրենց միջեւ (388) : Հայաստանի հիւսիս արեւմտեան մասը մնաց Բիւզանդիոնի, իսկ մնացեալ վայրերը Պարսկաստանի Պարս-

կական բաժինը հինգ անգամ աւելի մեծ էր : Յունական Հայաստանը, սակայն, բարգաւաճ էր և ռազմական կարեւոր դիրքեր ունէր :

Այս բաժանումով մեր երկիրը իր զինուորական կարեւորութիւնը կորսնցուց և հայ նախարարական դասուն մէջ աւելի խորացաւ բաժանումը :

Ինչպէս տեսնուի, Տիրան թագաւորէն սկսեալ հայ Արշակունիները կ'աշխատէին անկախ ըլլալ թէ՛ Հռոմայեցիներէն և թէ՛ Պարսիկներէն : Մարդպետա՛ն նախարարներու ազդեցութեամբ, բայց այս քաղաքականութիւնը յաջողութիւն չգտաւ :

Հեթանոս Հռոմի կայսրերը լաւ հասկցած էին Հայաստանի կարեւորութիւնը և անագին զոհողութիւններով յաջողած էին զայն կանգուն պահել իբրեւ արգելակ արեւելքէն եկող բարբարոսներու դէմ, բայց Բիւզանդիոնի անհեռաւես կայսրերը զայն մատնեցին թշնամիին՝ խորտակելով Արշակունեաց զահը և ճամբան բանալով կայսրութեան թշնամիներուն առջեւ :

ԵՐԵՒԵԼ ԴԱՇՏԻՆ ԿՈՒՆԻՒԸ. — Շապուհ Գ. հրովարտակով մը սպառնաց յարքունիս գրաւել կալուածները այն նախարարներուն որոնք Արշակի հետ մեկնած էին յունական բաժնի Հայաստանը : Ասոր վրայ, կարգ մը նախարարներ վերադարձան և իրենցմէ մէկ քանինները գողցան Արշակի գանձերը և տարին Խոսրովի Արշակ պահանջեց զանոնք, բայց Խոսրով մերժեց : Ասոր վրայ պատերազմ մը բորբոքեցաւ իրենց միջեւ : Երեւել յարազատ ճակատամարտին մէջ Արշակ չարաչար պարտուեցաւ և արամութենէ ու հիւանդութենէ մաշած մեռաւ անզաւակ : Իրմէ վերջ, Բիւզանդիոն, յունական բաժնի Հայաստանը կայսրութեան մէկ նահանգը դար-

ձուց և զայն կառավարեց կոմսերով: Այս կերպով ալ վերջացաւ յուեական բաժնի հայ թագաւորութիւնը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ.** — Արշակ Գ.ի մահէն յետոյ, իրեն հետ գաղթած հայ նախարարներէն անոնք որ նախապէս չէին վերադարձած, ներուժ ստանալով Խոսրովէն՝ ետ դարձան: Այս կերպով, Խոսրով ինքզինքը ուժով ցած տեսնելով, գաղտնի յարտերութեան մտաւ կայսեր հետ և անոր օգնութիւնը խնդրեց երկիրը նորէն կայսեր պաշտպանութեան տակ դնելու համար: Սակայն թէոզոս չուզեց նոր պատերազմներու դուռ բանալ ու միայն հաւանեցաւ որ Խոսրով իր բաժնի Հայաստանն եւս կառավարէ: Ասոր վրայ նախարարներէն ոմանք Պարսից Վառամ Գ. Կրմանի առջեւ ամբաստանեցին զայն իբրեւ կայսեր բարեկամ, մանաւանդ որ, Խոսրով, Հայոց կաթողիկոս ընտրել տուած էր Մեծն Ներսէսի որդին Սահակ Պարթեւը, որ իր նախորդներուն պէս յունասէր էր: Վառամ իր քով կանչեց Խոսրովը Հայոց սպարապետին հետ և Անյուշ բերդը նետեց զանոնք, ասոնց հարցոյքնութեան:

**ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.** — Ի՞նչ գիտէր Արշակունի վերջին թագաւորներու մասին: Ի՞նչ պայմաններու մէջ գահ բարձրացաւ Խոսրով Գ.: Ե՞րբ եւ ի՞նչպէս սեղի ունեցաւ Հայաստանի բաժանումը: Ի՞նչու տեղի ունեցաւ Երեւել դաշտի կոխը: Ո՞վ փորձեց Հայաստանը վերականգնել եւ ի՞նչ եղաւ հետեւանքը:

## ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ (ՇԱՐ.)

**Գ Ա Ս Ի Գ.**

### ՎՌԱՄՇԱՊՈՒՀ, ՇԱՊՈՒՀ ՊԱՐՍԻԿԸ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Գ.



**ՎՌԱՄՇԱՊՈՒՀ.** — Վառամ, Խոսրովի տեղ, Հայոց թագաւոր նշանակեց անոր եղբայրը՝ Վառճապուհ, որուն անունը անջնջելի պիտի մնայ մեր պատմութեան մէջ, իբրեւ ուսումը սիրող վեհապետ մը: Ան իշխեց 390—414 խաղաղութեան մէջ, իրարու հետ հաշտ և սիրով պահելով նախարարները և բարեկամութեան մէջ մնալով ինքն ալ դրացիներու հետ: Իր արդարամէջ մնալով ինքն ալ դրացիներու հետ: Իր արդարամէջ սիրութեան և իմաստութեան վրայ վստահութիւն ունէին նաեւ կայսրը և արքայից արքան, որոնք երբ վէճ մը ունեցան իրարու հետ Միջագետքի կողմը, իրենց կողմէ իրաւարար կարգեցին Վառճապուհը:

Վառճապուհի մօտ քառորդ դարու թագաւորութեան խաղաղ շրջանին էր որ տեղի ունեցաւ Գրոց Գիւտը Ս. Մեսրոպի և Սահակ Պարթեւի ջանքերովը որոնց աջակցեցաւ ինքը: Այս երեք անձերը մեր պատմութեան ամենէն մեծ գէմքերը կը հանդիսանան իրենց կատարած մեծ դերովը:

**ՇԱՊՈՒՀ ՊԱՐՍԻԿԸ.** — Յաղկերտ Ա. Սահակ Պար-



Թեև հայրապետին խնդրանքին վրայ, Հայաստանի թագաւոր նշանակեց Խոսրովը, որ բանտէն արձակուած դեռ կ'ապրէր: Սակայն Խոսրով մօտ 8 ամիս միայն ապրեցաւ:

Ասկէ յետոյ արքայից արքան Հայոց վրայ թագաւորացուց իր որդին Շապուհ, յուսալով որ այս կերպով պիտի կրնայ Հայերը հեռացնել Բիւզանդիոնէն և մօտեցնել Պարսկաստանի:

Սակայն Շապուհ չկրցաւ սիրելի ըլլալ ո՛չ նախարարներուն, ոչ ալ ժողովուրդին և ընդհակառակն անոնց անարգանքին ու ծաղրանքին առարկայ եղաւ: Այսպէս, չորս տարի թագաւորելէ յետոյ, ան վերադարձաւ Պարսկաստան իր հօրը յաջորդելու համար, բայց իր նախարարներէն սպաննուեցաւ: Հայաստանէն մեկնելէ առաջ, ան հրամայած էր իր տեղակալին ձերբակալել և Պարսկաստան զրկել հայ մեծամեծները՝ պատժելու համար զանոնք, սակայն նախարարները ապքստամբեցան և սպաննեցին տեղակալը:

Ասկէ յետոյ, Հայաստան, երեք տարի անիշխանութեան մասնուեցաւ, ապահովութիւնը վերցաւ և կեանքը դժուարացաւ:

ԱՐՏԱՇԷՍ Գ. (422—428).— Ի տես հայրենեաց այս վիճակին, Ս. Սահակ Պարթեւ դեսպանութիւն մը զըրկեց Վաւաճ Ե. արքայից արքային և նոր թագաւոր մը խնդրեց Հայոց համար: Վաւաճ Ե. Հայաստանի թագը յանձնեց Արտաշէսին որ Վաւաճապուհի որդին էր:

Նոր թագաւորը դեռ 18 տարու էր, գէշ դաստիարակուած և բոլորովին անյարմար այս բարձր պաշտօնին: Ս. Սահակ շատ խրատեց զինքը որ զգաստանայ, և նախարարները՝ որ հնազանդին թագաւորին, բայց

զուր անցան իր ճիգերը: Նախարարները այնքան զօրացեր էին որ ա՛լ չէին ուզեր հնազանդիլ թագաւորին: Ուստի անոնք որոշեցին զիմել Պարսից Դուռը պահանջելու որ Վաւաճ վերջացնէ թագաւորութիւնը: Զուր տեղը կաթողիկոսը խրատեց զիրենք բսելով. «Աւելի լաւ է մեր հիւանդ ոչխար բան օստիկն առողջ գազանը, որուն առողջութիւնը մեզի պատուհաս է»: Նախարարները իրենց որոշումը գործողեցին, և վընախարարները իրենց որոշումը գործողեցին, և կաթողիկոսը բռնուած իր քով կանչելով թագաւորն ու կաթողիկոսութիւնը երկուքն ալ պաշտօնանկ ըրաւ: Կաթողիկոսութիւնը յանձնուեցաւ Սուրմակ անուն կրօնաւորին և անկէ յետոյ Հայաստանը կառավարուեցաւ մարզպաններով: Այս մեծ դէպքը տեղի ունեցաւ 428 թուականին, այսինքն չին Դարերու վախճանին:

ԱՐՇԱԿՈՒՆԵՍՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. — Արշակունեաց հարստութեան անկման պատճառները հետեւեալներն են.

ա. Մեր երկիրը կը գտնուէր երկու մեծ և աշխարհակալ կայսրութիւններու միջև, որոնց համար անհրաժեշտ էր տէր ըլլալ Հայաստանի բարձրաւանդաւոր կին, իրենց ազդեցութեան տակ պահելու համար շրջակայ երկիրները, որոնց մէջէն կ'անցնէին սաղմական և առեւտրական ուղիները: Ասոր համարէր որ Հոռոմ, յետոյ Բիւզանդիոն դարաւոր պայքարներ ունեցան Պարսկաստանի հետ. այս կռիւներէն շատերը Հայաստանի մէջ տեղի ունեցան և աւերումի մասնեցին զայն:

բ. Այս պատճառաւ հայ Արշակունի թագաւորները չկրցան անկախ դիրք մը բռնել, մանաւանդ որ իրենց մէջ խելացի և հեռատես մարդիկ քիչ գտնուեցան: Գ. Պարսից և Հռոմայեցաց և վերջէն ալ Բիւ-

**Դ Ա Ս Ի Ե .**

**ԳՐՈՑ ԳԻՒՏԸ (412)**



զանդացւոց ազդեցութեան տակ հայ նախարարները, այս շրջանին, շատ զօրացան ու չուզեցին ենթարկուիլ թագաւորական իշխանութեան: Միութիւնը պակսեցաւ Հայոց մէջ: Հայաստան երկրի բնական կազմն ալ կը նպաստէր այս վիճակին: Մարդպետական նախարարները աշխատեցան ճնշել հայ իշխանները, բայց յաջողութիւն չգտան:

Գ. Լուսաւորչի ցեղէն կաթողիկոսները և հայ եկեղեցականութեան ստուար մասը յունասէր կուսակցութեան հետ եղան շատ անգամ և այս կերպով գըրգըռեցին Սասանեան Պարսկաստանի թշնամութիւնը:

Ե. Հայ ժողովուրդը գիր ու գրականութիւն չունենալով անուս էր և չէր գիտեր ազատութեան արժէքը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպիսի շրջան մը եղաւ Վուամշալուհի թագաւորութեան շրջանը: Ինչո՞ւ Յագկերտ Ա. իր որդին դրաւ Հայոց վրայ թագաւոր եւ ի՞նչ եղաւ արդիւնքը: Ի՞նչպիսի թագաւոր մը եղաւ Արտաշէս Գ. եւ ի՞նչ ըրին հայ նախարարները: Որո՞նք էին Արշակունեաց հարստութեան անկման պատճառները:



ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.— Հինգերորդ դարը մեր պատմութեան մէջ կը գրուէ բացառիկ տեղ մը. այդ դարու առաջին շրջանին է որ կատարուեցաւ Գիրերու Գիւտը որ մեր աղքատ փրկեց կորուստէ: Այդ դարը իրաւամբ կոչուած է «Ասկեղար»:

Իայց ինչո՞ւ առաջ տեղի չունեցաւ այդ գիւտը:

Պատճառները հետեւեալներն են.

ա. Մէկ դարէ աւելի էր որ քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնք յայտարարուած էր Հայաստանի մէջ բայց դեռ չէր արմատացած ու հասկցուած ժողովուրդէն. նոր կրօնքը կրնային ըմբռնել անոնք միայն որոնք յունարէն և ասորերէն լեզուներով Սասանեան շունչ կարգալ գիտէին, իսկ հասարակ ժողովուրդը լեզուէն զատ ուրիշ լեզու չէր գիտեր: Ժողովուրդը եկեղեցի կ'երթար և առանց բան մը հասկնալու դուրս կ'ելլար:

բ. Մինչեւ Գրոց Գիւտը Եկեղեցին և Արքունիքը օտար լեզու կը գործածէին, սակայն երբ Հայաստան երկու մասի բաժնուեցաւ, Պարսից բաժնին մէջ յունարէնը արգիլուեցաւ և պարսկերէնը սկսաւ գործածուիլ, բայց, դարձեալ բուն ժողովուրդը չէր հասկնար զայն:

գ. Բիւզանդացիներու և Պարսից վերաբերումը Հայաստանի և Հայ ժողովուրդին հանդէպ, հայ միտքը

արթնցուց և սեփական գիր ու գրականութիւն ունե- նալու մասին մտածել տուաւ:

Գ. Հայ ժողովուրդը, քաղաքակրթական որոշ բար- ձրութեան մը հասած արդէն, պէտք ունէր իր գիրն ու գրականութիւնը ունենալու:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ԳՐՈՅ ԳԻՒՏԷՆ. ԱՌԱՋ.— Թէ սեփական գիրը գտնուելէն առաջ մեր ժողովուրդը ունէ գիր գործածած է և ո՞ր աղբին գիրը, այդ յայտնի չէ. բայց թէ մեր նախնիքը անգիր դպրութիւն ունեցած են, տախկա անկասկած է: Այդ անգիր դպրութիւնը ժո- ղովրդական բանահիւստութիւնն էր, որմէ մէկ քանի նմոյշներ մեզի հաղորդած են Ե. զարու մեր պատմա- գիրները:

Այդ նմոյշներէն յիշենք.

- |  |  |
|--|--|
| 1. Տեղ ոսկի տեղայր<br>ի փեսայութեան<br>Արտաշէսի<br>Տեղայր մարգարիտ<br>ի հարսնութեան<br>Սաթինկան: | 2. Եթէ դու յորս հեծցես<br>Յազատ ի վեր ի Մասիս<br>Չրեզ կալցին քաջք տարցին<br>Յազատ ի վեր ի Մասիս<br>Անդ կացցես<br>Եւ զլոյս մի տեսցես: |
|--|--|
3. Երկնէր երկին եւ երկիր  
Երկնէր եւ ծիրանի ծով.  
Երկն ի ծովուն ունէր գկարմիրին եղեգնիկն.  
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր.  
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր  
Եւ ի բոցոյն խարտեաշ պատանեկիկ վազէր.  
Նա հուր հեր ունէր  
Ապա թէ բոց՝ ունէր մօրուս.  
Եւ աչկունքն էին արեգակունք:

Այս նմոյշներէն առաջին երկուքը կը վերաբերին

Արտաշէս Ա. ին. առաջինը անոր հարսնիքի նկարագ- րութիւնը և երկրորդը՝ իր զաւակ Արտաւազդի համար եղած անէծքն է. Գ.ը վահագն ստառածոյ համար շին- ւած ձօն մըն է և անոր ծնունդը կը նկարագրէ:

Այս նմոյշները անշուշտ մասերն են ամբողջութեան մը որ կորսուած է:

Ժողովրդական այս բանահիւստութիւնը անշուշտ բազմատեսակ է եղեր. անոնք երգուած ու տարածուած են Գողթան երգիչներու կողմէ (Գողթն ներկայ Ագու- լիսն է), թէեւ Արարատեան դաշտի և վանայ լիճի շուրջն ալ այդ երգիչներէն կային:

Հին Հայոց մէջ կար նաեւ թատրոնը, կը բաւէ յիշել թէ Արտաւազդ թագաւորը թատերագիր մըն էր:

Ս. ՄԵՍՐՈՊ (361—440).— Մեր միտքին այս ան- մահ լուսաւորիչը Տարօնի Հացեկոց գիւղէն էր և պո- տանութեան՝ աշակերտած Ս. Ներսէս Պարթեւի որմէ սորված էր յունարէնը: Իր յունագիտութեան շնորհիւ, երիտասարդութեանը, պալատի մէջ քարտուղարութեան կոչուեցաւ, իսկ յետոյ զինուորական դարձաւ:

Պայծառամիտ, գործունետայ և ազգասէր ըլլալով և ուզելով աւելի օգտակար ըլլալ իր ազգին, ան զին- ւորութիւնն ալ ձգեց և կրօնաւոր դարձաւ: Իրիտո- նէութիւն քարոզելու համար դէպի Գողթն գաւառը գնաց, ուր հեթանոսական երգերը նորէն սկսեր էին տարածուիլ ժողովրդեան մէջ: Այս քարոզչութեան ա- տենն էր որ ան ունեցաւ սեփական գիր ունենալու գա- ղափարը: Ս. Սահակ Պարթեւը զինք քաջալերեց և վաւարակութեամբ թագաւորը իրեն ամէն զիւրութիւն տը- ւաւ այդ նպատակը իրականացնելու համար:

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԻԱՆՔԸ .— Ս.

Մեսրոպ մեր գիրերու գիւտը ըրաւ Սամուսատ քա-  
լաքին մէջ 412  
Թուականին և այս  
մեծ եղելութեան  
մէջ մեր ժողո-  
վուրդը Աստու-  
ծոյ մտաը տե-  
սաւ :

Գտնելէ յետոյ  
հայ գիրերը, Ս.  
Մեսրոպ Հոռիա-  
նոս անուն յոյն  
գեղագիրի մը  
տարաւ զանոնք  
որ աւելի գեղեց-  
կացուց և յոյն  
այբուբենի կար-  
գով շարեց :

Մեսրոպի վե-  
րագործը Հայաս-  
տան եզու յաղ-  
թական, որովհե-  
տեւ ոչ մէկ ու-  
րիշ յաղթանակ պիտի կրնար ազգը ընդմիշտ փրկել  
կորուստէ :

Անմիջապէս գպրոցներ բացուեցան Հայաստանի  
զանազան կողմերը (ամենէն կարեւորն էր Վարդաշա-  
պատին) ուրկէ ելլողները կոչուեցան Աւագ քարգմա-  
նիչներ և ասոնցմէ ուսանելով շրջանաւորա եղողներն  
ալ՝ Կեսուր քարգմանիչներ: Առումը մը ուշիմ տշակերտ-  
ներ զրկուեցան այն ատենուան նշանաւոր քաղաքներ



Ս. Մեսրոպ

իրենց ուսումը կատարելագործելու, ուրկէ վերադար-  
ձին անոնք հետեւին ըստ Ս. Գիրքի ճիշդ օրինակ-  
ներ, որոնց վրայ Ս. Սահակ, Ս. Մեսրոպի աջակցու-  
թեամբ սկսաւ թարգմանել Աստուածաշունչը: Այդ  
թարգմանութիւնը այնքան գեղեցիկ և յաջող եղաւ  
որ օտարները զայն կոչեցին «Իշխոյ ամենայն թարգ-  
մանութեանց»:

Ե. Դարու մէջ ուսումն ու գրականութիւնը այն-  
պիսի բարձր աստիճանի մը հասաւ մեր մէջ, որ այդ  
Դարը կոչուեցաւ «Ոսկեդար»:

Ապա, Ս. Մեսրոպ, Յունաց կայսեր ներկայանալով  
ի Կ.Պոլիս, արտօնութիւն ստացաւ հայ գիրը յունական  
բաժնի Հայաստանի մէջ եւս տարածելու: Արդէն Հա-  
յոց սեփական գիր ունենալը Բիւզունդիոնի շահուն հա-  
մաձայն էր, որովհետեւ, կրօնքով Պարսիկներէն զատ-  
ուելէ զատ, Հայերը, հիմա, լեզուով ալ բոլորովին կը  
հեռանային անոնցմէ:


Ս. Մեսրոպ գտաւ նաեւ Վրացուց և Աղուաններու  
սեփական գիրերը: Մեր եկեղեցին ու մեր գիրը Հայ  
ազգը կորուստէ փրկեցին վերջնականապէս: Անկէ ի  
վեր թագաւորական հարստութիւններ եկան ու գա-  
ցին, նախարարական գահերը կործանեցան, սակայն  
ազգը մնաց այս երկու մեծ և զօրաւոր պահպանակնե-  
րուն շնորհիւ:

ՀԱՅՈՑՈՒՄԵՆԵՐ.— Որոնք էին հայ Գրոց գիւտին պատճառ-  
ները. ի՞նչ գիտենք հայ մշակոյթի մասին Գրոց գիւտէն առաջ.  
Ի՞նչ գիտենք Ս. Մեսրոպի մասին. ի՞նչ հետեւանքներ ունեցաւ  
այդ Գիւտը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

## Դ Ա Ս Ի Զ.

### ԹԱԳԱԽՈՐ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ.**— Արտաշեսեան և Արշակունեաց թագաւորութիւնը ձեւակերպուած էր այն ժամանակներ գոյութիւն ունեցող դրութեան համաձայն, այսինքն՝ աւաւապետական էր: Կար թագաւորը և իրմէ վար կային նախարարները, որոնք մէկ մէկ պզտիկ թագաւորներ էին: Այդ նախարարները հետզհետէ մեծցան ու զօրացան մանաւանդ Արշակունեաց օրով և տկարացուցին թագաւորական իշխանութիւնը:

Երկու հարստութեանց օրով ալ հայ ժողովուրդին մէջ կար անհաւասարութիւն, քանի որ նախարարական դասէն զատ կային նաեւ կղերական, և ռաւիկ դասակարգերը:

**ԹԱԳԱԽՈՐԸ.**— Թագաւորը քաղաքային և զինուորական պետն էր: Յաջորդութիւնը ժառանգական էր, այսինքն՝ անդրանիկը հօրը կը յաջորդէր:

Հեթանոսութեան ժամանակ հայ թագաւորը երկրպագելի էր, որովհետեւ ան աստուծոյ փոխանորդն էր, իսկ քրիստոնէութեան ժամանակ ան աստուծապալակ էր և սուբ կը նկատուէր:

Ուրեմն, հայ թագաւոր մը բացարձակ միապետ մըն էր և մնացեալ բոլոր մարդիկը իր կամքէն կախում ունէին:

Թագաւորական մայրաքաղաքը Արտաշատ կամ Վաղարշապատն էր, բայց թագաւորը կը պտտէր իր կայրուածներուն մէջ, բնակելու համար իր սիրած վայրը:

Արքունիքը ունէր երկու բաժին — քաղաքային տուն և զինուորական տուն, բազմաթիւ պաշտօններով և զինուորականներով լեցուն: Արքունիքի քաղաքային տան մաս կը կազմէին նաեւ թագուհիին և արքայորդիներուն տունները, որոնցմէ սուջինը շատ ճոխ կ'ըլլար: Թագուհին կը կոչուէր «Տիկնանց Տիկին» կամ «Հայոց Մեծաց Տիկին»:

Թագաւորը, երբ պատերազմ չուներ, կ'ըբաղէր որսորդութեամբ և խնձոյքներով: Հայ թագաւորի մը փառասիրութիւնն էր նաեւ մեծածախս և հանրօգուտ շինութիւն մը ընել և նոր քաղաքներ կառուցանել:

**ՊԱՇՏՕՆՆԵՐ.**— Արշակունեաց հարստութեան ժամանակ պետական հետեւեալ կարեւոր պաշտօնները կային.

ա. Մարդպետութիւն.— Այս պաշտօնը կը յանձնուէր Մարդպետական նախարարներուն. անոնց պաշտօնն էր հսկել թագաւորին արքունիքին, զանձին ու կայրուածներուն վրայ: Ասոնք մեծ ազդեցութիւն ունէին թագաւորին վրայ և կը կոչուէին նաեւ Հայր-Մարդպետ:

բ. Հազարապետութիւն.— Հազարապետին պաշտօնն էր հսկել երկրին շինարարութեան վրայ, հարկերը հաւաքել, երկրաբարծութեան հոգ տանիլ և պետութեան

եկամուտները շատցնել: Այս պաշտօնը յատուկ էր Ամատունիներուն:

գ. Սպարապետութիւն.— Այս պաշտօնը բանակի



Հայ զինուոր մը եւ զինուորական մը

հրամանատարութիւնն էր և կը պատկանէր Մամիկոնեաններուն:

դ. Թագադիր ասպետութիւն.— Այս պաշտօնը յանձնուած էր Բագրատունիներուն և դահակալութեան ժամանակ ասոնց իրաւունքն էր թագ դնել արքային գլուխը:

ե. Մաղխազութիւն.— Թագաւորին թիկնապահութեան կամ անոր անձի պաշտպանութեան պաշտօնն էր ասիկա, և յանձնուած՝ Սորխուռունիներուն:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐ.— Հայաստան բաժնուած էր բազմաթիւ նախարարութիւններու: Իւրաքանչիւր նախարարը իր երկրին մէջ անկախ էր ունէր. զօրք և հարկ կուտար թագաւորին: Մեծերը կը կոչուէին աւագ, իսկ փոքրերը՝ կրսեւ նախարարներ:

Նախարարներէն աւելի մեծ էին Բղեթխները, որոնց երկիրը Հայաստանի սահմաններուն վրայ կը գտնուէր. իրենց պարտականութիւնն էր պաշտպանել սահմանները օտար յարձակման դէմ: Կային չորս բըղեջխութիւններ — Նոբիրական, Աղձնեաց, Ծոփաց և Գուգարաց:

Նախարարներէն յետոյ կուգային մանր հոգատէրերը կամ «Ազատներ»: Ասոնց պարտականութիւնն էր զինուորութիւն կատարել: Արշակունեաց բանակը կը կոչուէր «Ազատագորք» և կրնար մինչեւ 120,000 հոգի հաշուել:


ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպէս էր Հայաստանի կառավարութեան ձեւը Արտաշէսեան եւ Արշակունի թագաւորութեանց օրով: Ի՞նչ գիտենք հայ թագաւորի իրաւասութեանց մասին. բանի՞ բաժանումներ ունէր հայ արքունիքը. սետական ի՞նչ կարեւոր պաշտօններ կային: Քանի՞ բղեջխութիւններ կային:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ (ԸԱՐ.)

## Դ Ա Ս Ի Է.

### ԵԿԵՂԵՑԻՆ, ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԸՆՏԱՆԻՔԸ




ԵԿԵՂԵՑԻՆ.— Հեթանոսական կրօնի ոչնչացումէն յետոյ եկեղեցին անցաւ անոր տեղը և գրաւեց անոր դերին հետ նաեւ կալուածները: Հետզհետէ քրիստոնեայ Արշակունի թագաւորները, նաեւ նախարարները և ժողովուրդը, նուէրներով աւելցուցին անոր հարըստութիւնը և հայ եկեղեցին բարոյականի հետ նիւթական հարստութիւն եւս ունեցաւ: Եկեղեցական դասը եւս զօրացաւ և հարստացաւ: Իր ձեռքն էր նաեւ դատական և կրթական գործը:

Հայ եկեղեցիին պետն էր կաթողիկոսը, որ կը նստէր Էջմիածնի մէջ: Անոր ազդեցութիւնը մեծ էր և թագաւորը շատ անգամ անոր խորհուրդին կը դիմէր:

Մինչև Սահակ Պարթև կաթողիկոսը հայրապետութիւնը Լուսաւորչի ցեղին պատկանեցաւ: Լուսաւորչի տունը միշտ յունասէրներու հետ եղաւ և այս պատճառաւ ան յաճախ պայքարի մէջ եղաւ պարսկասէր հոսանքին կամ անկախ քաղաքականութիւն վարել ուզող թագաւորներուն դէմ:

Լուսաւորչի տունին մրցակից էր ուրիշ մեծ և ազգեցիկ ընտանիք մը — Ադրիանոսի տունը, որ աւելի պարսկական քաղաքականութեան կողմնակից էր: Սուրմակ Ադրիանոսի տունէն էր:

Հայ եկեղեցին Արշակունեաց շրջանին կարեւոր դեր մը կատարեց, մեղմացնելով բարքերը, պաշտպանելով հասարակ ժողովուրդը մեծերու բռնութեանց դէմ, ստեղծելով գիր ու գրականութիւն և ապահովելով ազգին գոյութիւնը:



Ս. Էջմիածին

Հին ատեն եկեղեցականները կ'ամուսնանային: Ամէն մէկ նախարարութեան սահմանին մէջ կը նստէր եպիսկոպոս մը որուն պաշտօնն եւս ժառանգական էր:

ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.— Հասարակ ժողովրդեան ստուարագոյն մասը գիւղացիութիւնն էր, որ կ'ապրէր գիւղերու մէջ: Անոր մէկ մասն ալ քաղաքներու մէջ կ'ապրէր և կ'զբաղէր արհեստներով ու առևտուրով: Այս պարզ մարդիկը կը կոչուէին նաեւ «Անազատ», որոնք զերծ էին զինուորական ծառայութենէ, բայց ի-

րենց վրայ կը ծանրանար նախարարը և պետութիւնը ապրեցնելու հոգը: Հասարակ ժողովուրդը միայն պարտականութիւն ունէր և ոչ իրաւունք: Հոգը կը պատկանէր նախարարին որ զայն կը բաժնէր գիւղացիին վրայ մշակութեան համար և կ'ստանար արդիւնքին որոշ մասը:

Հայաստանի մէջ հասարակ ժողովուրդին վիճակը առհասարակ աւելի լաւ էր ուրիշ երկիրներու նոյն դասակարգի մարդոց վիճակին բողբոսմամբ:

Հասարակ ժողովուրդը կը կոչուէր նաեւ *ուամիկ*:

**ՔԱՂԱՔՆԵՐ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ.**

Հայաստան գտնուելով արեւելքի և արեւմուտքի մեծ ճամբուն վրայ, միայն պատերազմներու թատր չեղաւ, այլ եղաւ նաեւ առեւտրական կարեւոր ճամբայ մը և առեւտրական յարաբերութեանց կեդրոն: Այս պատճառաւ Հայաստանի մէջ զարգացան հետեւեալ քաղաքները — Արտաշատ, Դուին, Երուանդաշատ, Զարիշատ: Բայց Հայաստան նաեւ արտահանող երկիր մըն էր:

Հայաստան առեւտրական յարաբերութեան մէջ էր Սեւ ծովու եզերքային քաղաքներու, ինչպէս նաեւ Փոքր Ասիոյ և Պարսկաստանի հետ:

Հայաստանի մէջ բաւական զարգացած էին նաեւ արհեստները, քանի որ երկիրը ունէր հանքային հարուստութիւն: Այդ արհեստներէն յիշենք զարքնութիւն, զինագործութիւն, պղնձագործութիւն, ոսկերչութիւն, հիւսնութիւն, կաշեգործութիւն, բրուտութիւն: Նշատար էին մանաւանդ Հայաստանի հիւսուածքները:

**ԸՆՏԱՆԻՔԸ.**— Հայ ընկերութեան հիմը ընտանիքն

էր: Ընտանեկան կապը զօրաւոր էր Հայոց մէջ և ընտանեկան յարկը՝ մաքուր:

Ընտանիքին պետը հայրն էր որուն կ'ենթարկուէին միւս անդամները: Սակայն մայրն ալ յարգուած էր և պատիւ կը վայելէր: Կարեւոր է գիտնալ թէ հեթանոս Հայոց աստուածութեան երկրորդը Անահիտ աստուածուհին էր որ «մայր ամենայն զգաստութեանց» կը համարուէր և Հայաստանի փառքը կը նկատուէր:

Հայ կնոջ պարկեշտութեան մէկ օրինակը հետեւեալ աւանդութիւնն է. — Կիւրոս Տիգրանի միջնորեալ աւանդութիւնն էր Մարերու հետ հաշտեցողութեամբ Հայոց թագաւորը Մարերու հետ հաշտեցողութեան մասին հարցնէ. «Իսկ դու, Տիգրան, ինչ փրկանք կուտաս կնոջդ համար»: Տիգրան, որ շատ կը սիրէր իր կինը, պատասխանեց. «Եթէ հարկ ըլլայ կինս, աղախնութենէ ազատելու համար՝ ամբողջ անձս կուտամ»: Աւելի վերջը Տիգրան հարամբողջ անձս կուտամ»: Աւելի վերջը Տիգրան հարցուց իր Զարուհի կնոջ. «Բեզի ալ գեղեցիկ թուեցա՞ւ կիւրոս»: — «Ես անոր չնայեցայ» պատասխանեց Զարուհի: — «Ուրեմն որո՞ւ նայեցայ», հարցուց Տիգրան: — «Անոր՝ որ ըսաւ. «Եթէ հարկ ըլլայ՝ անձս կուտամ» որ կինս աղախին չըլլայ»:

Քրիստոնէութենէն յետոյ հայ կնոջ յարգը նոյնքան և աւելի բարձր մնաց: Եթէ ուշադրութեամբ քննենք մեր պատմութիւնը պիտի տեսնենք թէ պատմական կարեւոր դէմքերը իրենց մեծութիւնը կը պարտին իրենց մայրերուն:

Սկզբնական այդ շրջաններուն, երբ Հայոց մէջ դպրոցները գեռ տարածուած չէին, սովորութիւն էր որ Հայ փոքր նախարարները իրենց գաւակները զբոսկէին մեծ նախարարներու տունը՝ հոն կրթուելու համար: Այդ տեղ արու զաւակները մեծ նախարարներէն



կը սորվէին պատերազմելու արուեստը, իսկ աղջիկները՝ նախարարաց տիկի՛ններու քով՝ պալատ և տուն կառավարելու ձեւերը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ նկարագիր ստացաւ եկեղեցին՝ հեթանոսութեան յաջորդելէ յետոյ: Ի՞նչ գիտէք Լուսաւորչի ցեղին կաթողիկոսներու մասին. ի՞նչ դեր կատարեց ան: Ի՞նչ գիտենք հասարակ ժողովուրդի մասին: Հայաստանի դիրքը ի՞նչ բաներու պատճառ եղաւ. որո՞նք էին իր զլխաւոր քաղաքները եւ ի՞նչ արհեստներ կային երկրին մէջ: Ի՞նչ գիտենք հայ ընտանիքի մասին: Ո՞ր կ'ստանային իրենց դաստիարակութիւնը հայ նախարարաց զաւակները:



— ՎԵՐՋ —

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.

#### ՆԱԽԱՀԱՅՎԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Գաւ Ա.	Հայաստանի հին բնակիչները	էջ 5
» Բ.	Խալդ-Ուրարացիք	» 8
» Գ.	Նախ-Ուրարացւոց բաղաձայնի պատմութիւնը	» 13
» Դ.	Ռուսաւ Ա. եւ Ուրարուի անկումը	» 16

ՄԱՍՆ Բ.

#### ՀԱՅՎԱԿԱՆ ՇՐՋԱՆ

» Ե.	Հայ ազգին ծագումը	» 20
» Զ.	Հայաստան Պարսից եւ Սելեւկեանց իշխանութեան տակ	» 24

#### ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

» Է.	Արտաշէս Ա.	» 29
» Ը.	Տրգրան Գ. Մեծը	» 32
» Թ.	Հայ-հռոմեական պատերազմները եւ Տրգրանի կայսրութեան փայլումը	» 36
» Ժ.	Հայաստան Մեծն Տրգրանէ յետոյ Արտաշէս Ա.	» 40
» ԺԱ.	Հայաստան Արտաշէսեան Հարսութեան կործանումէն յետոյ	» 45

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

- » ժԲ. Տրդաս Ա. էջ 48
- » ժԳ. Հոռոմայեցոց եւ Պարսից  
համաձայնութիւնը » 52
- Դաս ժԴ. Հայասան Տրդասի յաջորդներուն օրով էջ 55
- » ժԵ. Սասանեանները եւ Հայերը » 59
- » ժԶ. Տրդաս Գ. եւ Բրիտանացիներու  
մուտքը Հայասան » 62
- » ժԷ. Հին Հայոց կրօնքը » 65

ՀԱՅԱՍՏԱՆ ՏՐԴԱՏ Գ.Է ՅԵՏՈՑ

- » ժԸ. Խոսքով Կոսակ եւ Տիրան » 68

ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

- » ժԹ. Արեակ Բ. » 71
- » Ի. Արեակի քաղաքներու  
վերջին օրերը » 75
- » ԻԱ. Պապ » 78
- » ԻԲ. Վարազդաս » 82
- » ԻԳ. Արեակ Գ. եւ Խոսքով Գ. » 86

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

- » ԻԴ. Վախճանի, Շապուհի Պարսիկը  
եւ Արաբի Գ. » 89
- » ԻԵ. Գրոց Գիւլք » 93

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

- Դաս ԻԶ. Թագաւոր եւ նախարարներ էջ 98
- » ԻԷ. Եկեղեցիներ, հասարակ ժողովուրդը,  
ընտանիքը » 102
- Բովանդակութիւնը » 107



ՎՐԻՊԱԿ

		Ուղղել	
էջ 58	տող 9	գլուխթ: գլուխը:	Շուրջը գրուած է:
» 68	» 20	հաշտեցնել,	հաշտեցնել զանոնք,
» 94	1.	տող 3 Արտաշէսի	Արտաշէսի,
	2.	» 2 Մասիս	Մասիս,
		» 3 քաջք	քաջք,
		» 4 Մասիս	Մասիս.
	3.	» 1 երկիր	երկիր,
		» 5 ելանէր	ելանէր,
		» 7 ունէր	ունէր,
		» 8 բոց	բոց

ՆՈՅՆ ՇԵՂԻՆԱԿԷՆ

Շ Ա Ր Ք Ա.

			Եզ. Դն.
	Հայոց Պատմութիւն, Տարրական,	Գին	6
Ա. ԳԻՐԲ.	Հայոց Պատմութիւն, Հին Դարեր,	Գին	6
Բ. ԳԻՐԲ.	Հայոց Պատմութիւն Միջին եւ Նոր Դարեր	»	10

Շ Ա Ր Ք Բ.

Ա. ԳԻՐԲ.	Հայոց Պատմութիւն Հին Դարեր	»	8
Բ. ԳԻՐԲ.	Հայոց Պատմութիւն Միջին Դարեր	»	12
Գ. ԳԻՐԲ.	Հայոց Պատմութիւն Նոր Դարեր եւ Ժամանակակից Շրջան	«	15

Դիմել հետեւեալ հասցեին՝

L. ADJÉMIAN

B. P. 1060

LE CAIRE — EGYPTÉ

Տպարան ՍՍՀՍԿ-ՄԵՍՐՈՂ  
Գանիթ

105  
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ


ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Ա. ՇԱՐՔ

	Եզ. Դն.
Հայոց Պատմութիւն, Տարրական, Գին	6
Ա. ԳԻՐՔ. Հայոց Պատմութիւն, Հին Դարեր, Գին	6
Բ. ԳԻՐՔ. Հայոց Պատմութիւն Միջին Եւ Նոր Դարեր »	10

Բ. ՇԱՐՔ

Ա. ԳԻՐՔ. Հայոց Պատմութիւն Հին Դարեր »	8
Բ. ԳԻՐՔ. Հայոց Պատմութիւն Միջին Դարեր »	12
Գ. ԳԻՐՔ. Հայոց Պատմութիւն Նոր Դարեր Եւ Ժամանակակից Շրջան »	15



Դիմել հետեւեալ հասցեին՝

L. ADJÉMIAN

B. P. 1060

LE CAIRE — EGYPTE

1857

2013

